

Ղ. ՄԵԼՈՅԵԱՆ

ՆԿԱՐՆԵՐ

Ա. ԳԻՐՔ

891.99  
Ն-53

14 FEB 2011

8

42

4

Հ. ՄԵԼՈՅԵԱՆ

91.99

53 սր.

# ՆԿԱՐՆԵՐ

Ա. ԴԻԲ

Նկարչին Փոլ—Տոլի Եւրոյիկը—Եղեւ-  
 նի Գիօթըր—Կուսնաճ Գիճը—Շոյեկի լեռ-  
 ճեւուճ-Յոսոյիլը-Բոսփոսոսճ Եւ Կապիճ.  
 (Ա.Գոսսուփուրսլ,ճ) : . . . . .

91.99

5-53

Երակ ֆեթԱԿ

Կիրաւն

1912

27.06.1913

43285



Տարան ֆեթալի

կրտսե

№ 5

3033-19



3032-58

3033-19

Յեղափոխական  
Ռուսոցիչ՝  
Անբաղ, Անեխիմ  
Թանկազին ընկեր  
ՍՍԱԼՄԱՆԻՆ՝  
(Հ. Բաղդեցեան)  
Կը նուիրէ

Հեղինակը.

## ՆԿԱՐԻՉԻՆ ՔՈՎ

Գիշերուան անձրևէն ետք՝ արևուտաւում մը կը ծիծաղէր զուրպը : Պարուհիի սեռութիկ աչերը կը խաղայլն սե. վաւալն սակ ուրախ ու զուարթ :

Կտարք կեցաւ . . .

Նախորդ օրուան պէս՝ նկարիչի սենեակին մէջ ասկնուզրայութիւն մը կը տիրէր, — նկարները ցիրուցան. ներկերու սուտերը, զոյնզոյն վրձինները յատակին վրայ ինկած. զեռ կիսատ ու թայ փէյզամներ սեղաններու վրայ — խառնափնթոր մը, զոր զգօն տանտիկին մը կընար միայն զուրս փախցնել : Առաջի անգամ աննողը պիտի կարծէր որ չարածճի մանուկ մը իր քմահաճ մէկ վայրկեանին ամէն ինչ խառնչակեր ու պահուրտեր է :

Բայց մանուկի փոխարէն՝ հասուն տարիքով, միջահասակ, քիչ մը աւելի լե-

ցուն իրանով վարպետը դէմերնիս կեցաւ  
 իր սովորական ժպիտով . առաջին հարցու-  
 մը որ ըրաւ, սենեակին սաքսութեան մա-  
 սին էր :

— Ոչինչ, ոչինչ, — պատասխանեց պա-  
 րուհին, — ևս վարժուեր ևմ ցուրախ, ևս  
 գրեթէ միշտ մերկ ևմ պարտած :

Վարպետը փայտ լեցուց վառարանը :  
 Տիկինը առանց նախարանի անցաւ  
 դարձին .

— Գիտէ՞ք, պարսն, ևս շատ ուրախ  
 ևմ որ հանդիպեցայ ձեզի . դուք արեւելցի  
 էք, ուստի և աւելի բաւ պիտի հասկնաք,  
 ըմբանէք արեւելքը, շատերը, շատ օտար  
 նկարիչներ փորձեր են գիտ նկարել զանա-  
 զան գիրքերու մէջ, բայց չեն հաջողած . . .  
 անոնք չեն կրցած հասկնալ զիս . անոնց  
 քովը ոչնչաւ պակասած է այն խորութիւնը,  
 զգացումներու այն թիփիք արտայայտու-  
 թիւնը, որ բաւերով չէ կարելի բացատրել . . .

Ի՞նչ գիրքով կ'ուզէք . . .

— Ա՛խ, գիտէ՞ք . . . — կտրեց նկարչի

խօսքը տիկինը — այսօր իմ արամադրու-  
 թիւնը շատ, շատ բաւ է, այնպէս բաւ կը  
 զգամ ինքզինքս . . . հա՛, ևս կ'ուզեմ Սալո-  
 մէի գիրքը . — դուք տեսա՞՞ծ էք Օսկար  
 Ուայտի Սալոմէն :

— Այո՛ :

— Հա՛, գիտէ՞ք, այն գիրքը, կըր . . .  
 սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք — ու բացաւ պա-  
 յուսակը . — Նախ տեսէ՛ք իմ նկարները :

Տիկինը մէկիկ մէկիկ սեղանին վրայ  
 դրաւ առանեակ մը լուսանկարներ . — Ահա  
 պարսկական պատկած գիրքով պարը, պա-  
 րուհին քամակի վրայ խնկած է դահաւորակի  
 մը վրայ, վիզը ծնօտին և կուրծքին հետ ու-  
 զիզ գլիմ մը կազմած և ծոռները ծալապա-  
 տիկ հանգոյց մըն են ձևացուցած իրարու .  
 քով :

— Գնչուհիի պարը . ցնցտփներու մէջ՝ չար-  
 ճրճի հայեացքով՝ մէջքը կուացուցած՝ մատ-  
 ները չրթունքին կը ժպտի : — Պարսկա-  
 կան նոտած պարը . կարծես կը գալարուի  
 օձային օղտփներով շահնշահերու ոտքերուն  
 սակը :

— Ահա՛ Բարսիկը, ահա՛ Սարգիսն են...

— Այ, ա՛ն, Սարգիսն կ'ուշիտ, երբ...  
երբ... , ես ձեզի ցոյց կուտամ զիրքը,  
հազուսաները հետս են:

Պարուհին նստեր է, ծունկերը իրարու  
վրայ, արմուկը դահուսրակին յենամ՝ զը-  
լուխը դէպի աջ հակամ՝ հոյսոյքը սանե-  
րուն՝ կը մտածէ:

Նկարիչը ուզելով զէմը կեցած կը զխոէ  
պահ մը:

— Այ, ա՛յ, մի՛ շարժուիք, հիանալի  
է... հիանալի... գլուխի ձեք...

Պարուհին հետաքրքրութեամբ գլուխը  
կ'ուզղէ:

— Կորսու, կորսու, ինչո՛ւ շարժուեցաք,  
եջը ձեք սքանչելի՛ էր:

— Հա՛, ի՛նչպէս, ի՛նչպէս էր, այսպէ՛ս...

— Ե պարուհին կը փորձէ նստիկին ձեք  
տալ մարմնին ու գլուխին. — այսպէ՛ս...

— Չէ՛, չեզա՛ւ, չեզա՛ւ:

Ն. երեքս սլ կ'ստիտասանք, որովհետեւ  
որքան սլ որ աշխատեցաւ, չի յաջողեցաւ

նստիկին զիրքն ու ձեք տալ իր մարմնին:  
Պատասաններու վարտոյցները կ'ի-  
ջեցնենք ու մինակ կը թողունք պարուհին  
իր հազուսաներուն հետ...

— Բան ըստէ կարը սենեակ կը մանենք:

Գեղին ու կարմիր գիծերով շերտա-  
ւորումը ղենչակը շրջադասակով մէջքը,  
թուղիկի հանգոյց մըն է կազմեր ասջեի  
կալմը. հանգոյցէն կարը վար են կախ-  
ուեր ղենչակի ծոպերը, սրանք կը վեր-  
ջաւորուին շարք մը փոքրիկ սակիներով.  
Նուրբ ու ձեւուոր սրունքները կարծես  
շարունակութեանը կը կազմեն ղենչակի ու-  
կեթիկ ծոպերուն և ձերմակ ու մանրիկ  
տաները կը կենան զօրգին վրայ: Գլուխը  
ձգեր է գոյնզգոյն մետաքսեայ շարքը, որ  
առատ ու ցրիւ սե մազերու վրայէն կ'իջ-  
նէ ու կը ծածկէ մերկ ուսերը:

— Ահա՛, Սարգիսի ատրաղը:

Նկարիչը զբան ասջե անշարժ կեցած  
կը զխոէ...

— Հիանալի է, ես երեւակայի անդամ

չէի կրնար, անտպատի մէջ ուխտաւոր. արթիւթ մտակ, որո՞ւ միտքէն կ'անցնէր:

Իսկ ես երկուքն ալ հաւասարոջտի հետաքրքրութիւնով մը կը զիտեմ, անոնք կ'աշխատին իրար հասկնալ, իսկ ես՝—այդ երկուքը և անոնց իբարտ մասին ունեցած քմրանումը: Ես գրեթէ չկամ անոնց համար, և որպէսզի բարբառի նկատելի չըլլայ իմ ներկայութիւնը, որպէսզի բայտրձակ աղտաւ ըլլան իրենց վարուելակերպութեն մէջ, ես կը քաշուիմ մէկ անկիւնը՝ դահաւորակին վրայ ու կը անշուտրութիմ հին:

Տիկինը թեկերը տարածած՝ առաջ կը նետուի:

—Այ այտպէս, գիտէ՞ք: կ'ուզում տեսնել այն բոտէն, երբ Սպովեն կը ձգտի, կը աննչայ ցոյց տալ որ ինքը կը սիրէ... դանէ անգամ մը, անգամ մը համբուրէ Յովհաննէս Մկրտիչի չրթուները. — և զուխը կը ձգէ դէպի իմ անկիւնը, աչքերը կը ստանան Քանթասթիք փայլ, չրթուները կը բա-

րականն ու կը սեղմուին՝ ցուցադրելով մանրիկ աասմներու ճերմակ շարքը, թեկերումները կը պրկուին, ծնօսն ու վիզը կը կազմեն ուղիղ գիծ մը լանջքին հետ միտսին, ունեղերը աւելի կը լայնանն ու կիրքի թափը կը սրտթիւան... աջ ծունկը առաջ է ծուր, ձախ ստրի մտաները սեղմուած են գետին, իսկ սրունքները պրկուած ուժով...

Բոպէ մը այդ զիրքով կենալէ ետքը՝ կ'ուզուի:

—Այ, այտպէս:

Վարպետը քովընտի կեցած՝ իր ճաղատ զուխը կը շոյէ:

—Բայց դժուար է այդ զիրքով կենալ, շնա կը յոգնիք. — ու կը լսէ:

Կը լսէ նաև միւտը ու կը մտածէ, անոր լանջքին վրայ կը նկատեմ թեթեւ կրէճը:

—Եւ յետոյ՝ արկին, — մտածելով կ'ըսէ նկարիչը, — ես ձեզի բան մը ըսեմ, հարկա՛ւ, կը հասկնամ, ձեզի, դերասաններու համար ամէնէն աւելի կարեւոր է բա-

պէի մը մէտքը տրտայտանկ, բայց պէտք է  
զիտնաթ, որ նկարչութեան մէջ գերասան  
չկայ: Ն'ս, մասնատրտակէ՝ բնու՛ն չեմ սի-  
րեր նկարել բազէի մը մէտքը, գերադա-  
տելի է միշտ բնական գիրքը, բնական,  
ինչպէս որ կայ:

Պարուհին կը մտածէ:

Ապր՛ չբխու՛նքներու մէջէն մեզմ  
եղանակ մը կը մտնայ և կը քայլ բազիկ  
տաներով գորզին վրայ, հեղձեալէ կ'արտ-  
գանան քայլերը, թեւերը հորիզոնական  
գիրք կ'ստանան, կը գտնայ թեթեւ մը իր  
առանցքին վրայ, զինչակին ոտկեթել ու ու-  
կեշար ծոպերը կը զնգզնգան, սրունքներու  
վերի մասերը սրպէս մարմար սիւներ կ'ար-  
ձանանան օդին մէջ՝ երբ տաները կը ձգէ,  
երկու ափի մէջ հորիզոնական բռնած շը-  
զարչը շերտեր կը կարէ տարածութեան  
մէջ և մազերը կը ծածանին գլխու շղար-  
չին հեռ ծփալով...

—Սալամէի պարը—կը շնջայ պարու-  
հին ու կ'իյնայ դահուտրակին վրայ:

—Սքանչելի, է բայց կը կրկնեմ, աի-  
կին, դժուար է, շատ դժուար այդ գիր-  
քով կենայ երկար տանն:

Տիկինը կը մտածէ.

—Լս'ւ, ես ձեզի կը հասկնամ այժմ,  
կը հասկնամ այժմ, կազմեց'ք քաշ մը...

Նկարչը սենեակին մէջտեղը կը քաշէ  
անկիւնի տակը, վրան կը ձգ, տրեւեան  
գործուածք կանտէ ճածկոց մը, և արկինը  
կը նստի վրան:

—Ես պիտի ցոյց տամ ձեզի այն բա-  
զէն՝ երբ Սալամէն չի կրնար իր նպատակին  
հասնիլ, յուսա՛տա, բայց միեւնոյն տան  
խառնած ու վրէժինդէր՝ վերջին միջոցը  
կը վարձէ, Յալամէնէն Մկրտչի գլուխը...  
ու՛շտն է չբխու՛նքները...

Ու արկինը ո՞ջ ձեռքով տակը կը բռնէ  
քարի անկիւնը, ձախ ձեռքով կը սեղմէ  
չարիւր ափին մէջ ու կը զնէ դողը զեն-  
չակի հանգստցին վրայ, գլուխը աղեղնա-  
ձե լանջքին վրայ կը ծռէ, զանգուր սեւ  
մազերը շղարչի պէս կը ծածկեն դէմքին

մէկ մասը, աչքերու արտեւանունքը կիսով չափ բաց կը մնայ...

Նկարիչը կը նայի քովընտի, ու մատի ծայրերուն վրայ դրոյշ քայլերով կը մօտենայ.

—Թոյլ կուտաս՞ք ձեռք տամ ձեր գըլուխին.

—Խնդրեմ, խնդրեմ.—համաձայնութեան նշան կընէ արիկներ:

Եւ նկարիչը գլուխի շարշին եզրերը կը ձգէ դէպի ետ, աւելի սրոշ կ'երեւի արիկնոջ աջ ուսը ու կոնտիլի մէկ մասը հոյանի:

Կը հեռանայ վարպետը, աչքերը կը ձախ, գլուխը կ'ուղղէ, ապա կը ծռի, կը նայի ու կ'ըսէ.

—Այ, սքանչելի է, թեւք քիչ մը ծռեցէ՛ք, ուսին տունքը անկի բնական դիրք, ծռնկերը անկի բացէ՛ք, գլուխը քիչ մը դէպի աջ, ձեռքը աւելի սեղմեցէ՛ք... Այդպէ՛ս...

Վարպետը չփեց ձեռքերը, երես նոյնցաւ, ժպտեցաւ ու չրթունքներու մէջէն բան մը մրմուռաց:

Ինծի այնպէս թուեցաւ, որ անքառն տարիով մը աւելի երխտասարդացաւ, շարժումները արագացան, անօրինակ ոգևորութիւն մը փայլեցաւ անոր աչքերուն մէջ, առաջ քաշեց ետտանին, վրան դրաւ սրտարատ կտուր ու սկսաւ ամուխով նկարել:

Ձեռքը կը շարժէր, կը կազմուէին գիծեր անկանոն ու խտանակ, ամուխը կը սասէր երբեմն կտուրի վերի կողմը, երբեմն վարի, մէկ անկիւնէն միւսը կը թռչէր յանկարծ, ձեքմակ թաշկիմակով կը սրբէր քանի մը գիծ, ու նորէն կարծես խող կ'ընէր... հազիւ հինգ բոպէ՛ս և արիկնը նոյն դիրքով նստել էր կտուին վրայ:

—Ներկեր հաւաքու՛մք.—էրաւ, ներկերու գլանները սեղանին վրայ դրաւ, օձիքը արձակեց, թեթեցաւ, փունջ ձգւորձին ձեռք բռնեց, ձախ ձեռքի բոյթ մատը անցուց

Երանդատները ու սկսում:

Չանագան գոյներու խառն ի խառն գիծերը լրար կը յաջորդէին:

Ես կը հայեմ վրձինի խարտանջիւր շարժումին և կը նկատեմ թէ ի՞նչպէս ամեն մէկ շարժումը նոր ծաղիք մը կ'աւելցրնէ հազարամներուն, ամեն մէկ գոյնի թիւ մը փոփոխութիւնը նոր կեանք կուսաց անշունչ կառուին. ա՛նա թեկն միտերը ի՞նչպէս կ'որ ձեռով կը մարմնաւորին կառուին վրայ. մտերը խառն ի խառն փարկը թափին, գէժք չիայ, բայց սրղէն մարմինը կարմուսած է և ասանց գէժքի պ կեանքը կը հասի այդ մէկ քանի կոչու գիծիկն ու գոյներէն:

— Հարբբան, Հարբբան, — կը սկսի Երզնկ նկարիչը. — ներքեցէ՛ք, տիկին, ես աշխատելու ատեն ստորութիւն ա՛նիմ կ'ամ կ'երգեմ, կ'ամ կը սուշեմ:

— Ոչինչ, սչինչ: —  
— Սիրած՝ սիրածին չեն տար, Հարբբան. — կը շարունակէ վարդուար:

— Հո՛ւ, ճի՛շտ է այդ, սիրածը սիրածին չեն տար. — կը հառաչէ տիկինը:

— Ըջմարիտ բանաստեղծութիւնը ժողովուրդինն է, պարզ, վճիտ ու անկեղծ... — Կ'սկսի կարծես՝ ժողովրդական բանահիւսութեան դաստիարակութիւն մը, արատաւնութիւններ ու Երզնկ իրար կը յաջորդեն: Ժամանակը կ'անցնի աննկատելի կերպով. տիկինը ամենայն համբերութեամբ իր զիրքը կը պահէ. նկարը՝ ասկառ առ սակաւ կը կազմուորուի կառուին վրայ:


— Կործնեմ յոյնեցաք, հը՞, այո՞, ձեք թեք թէ՛ մը թուլցաւ:  
Դադար:

Տիկինը քովս, գահաւորակի վրայ կը ծկըւսած. ճիշտ կատուի մը պէս, որ մուկի բայնը կը դիտէ, իր նկարին կը նայի.

— Հոգսկո՛ւ պ... ի՞նչ գոյներ... ա՛խ, որքան կը ջանիկ եմ. — ու թիւ մը կ'առաջանայ գէպի նկարը:

— Այսօր այսքան պ բաւ չէ՞, տիկին, կը յոգնիք:

3032-48



—Օ, ո՛չ, թէև կէսօր է, բայց եթէ արատ մը ցամաք հաց տաք ինձի, ես մինչև երեկոյ հօս կը կենամ:

—Ախտո՛ս, ձեզի չպիտի կրնամ գոհացնել, ասի կին, ես սրահմ կեանք կ'ապրիմ:

—Օ, ես այ՛ շատ կը սիրեմ, շատ, միայն ինձի հասկցող քլայ — ու կատուի մը պէս նորէն իր նախկին տեղը կը ցատկէ:

—Ոչի՛նչ, ոչի՛նչ. շարունակե՛նք, ես բնա՛ւ յոգնած չեմ:

Վարպետը իր տեղը կ'անցի.

—Տիկի՛ն, դուք աւելի բոց չէ՞ք պարած:

—Ինչո՞ւ չէ:

—Ձե՞ կարելի արդեօք քիչ մը աւելի վար իջեցնէք ձեր ղենչակը, այնպէս որ կախուած երևի ոճ... — Կինը հասկցաւ ասորէն առանց բտր արտասանելու, և հրկմտեցաւ սրահ մը: Կանացի ամօթխածութիւնը նկատեցի:

—Պէտք է վարժուիլ, ես այնքան եմ տեսեր. թողէ՛ք...

Եւ փոքրիկ, ձերմակ ստինքները վար

կը կախուին թուշիկի ղենչակի եզրին վրայ:

Վրձինը կը շարժի արագ, կտաւը տակաւ առ տակաւ աւելի կենդանութիւն կ'ըստանայ:

—Ախ, գիտէ՞ք, — սկսաւ տիկինը. —

Ես քսաներկու տարեկան եմ, բայց այնքան եմ տանջուեր, այնքան եմ տանջուեր, ինձի չեն հասկնար, մանաւանդ Հայերը ինձի շատ են հալածած: Ու պատմեց քանի մը միջադէպեր իր կեանքէն:

—Է՛հ, տիկին, թքեցէք վրան, ի՞նչ կարելորութիւն ունի ամբօթին կարծիքը:

—Միայն ամբօթը չէ, նոյնիսկ զարգացածները կ'արհամարեն և կը նային ինչպէս ինկած կնոջ վրայ:

—Է՛հ, տիկին, թքեցէ՛ք վրան. ամբօթը ամբօթ է:

—Ա՛ս... այդ դուցէ՛ ձեզի, նկարիչներուդ համար այդպէս դիւրին է ըսել. բայց մեզի՛ դերասաններու համար ուրիշ է — հառաչանքով մը ըսաւ պարուհին. — դուք դուցէ՛ չգիտէ՛ք, որ դերասանը միշտ

պէտք ունի ամբողջի. իսկ այնպէս դժուար է, այնպէս դժուար է. երբ քեզի կարճամահեն, վրադ կը նային որպէս խաղալիքի...

Վարպեար լուց՝ ապա սկսաւ եղանակ մը սուլել:

Նկարը կը կենդանանար տակաւ առ տակաւ: Ես կը շարունակէի նայիլ նկարին ու պարունիին, կը փորձէի առանց մէջ եղած նմանութիւնն ու տարբերութիւնը գահազանել և մաքիս մէջ կը կրկնէի:

— Ձեզի՛, նկարիչներուդ համար գուցէ այդպէս է, իսկ մեզի՛, ղերասաններուս մի՛շտ պէտք է ամբողջ...

Եւ վարպեար կը սուլէր...

1910



## ՀՈՂԻ ՄԱՐԴԻԿԸ

Երեք օր էր, որ ծերունի Սարգիսը պառկել էր:

Նրա անկողինը ձգուած էր փողոցի փոքրիկ դռան անմիջապէս ետեւ, գեանից մի քիչ բարձր սաքուի վրայ:

Անկողնի շուրջը հաւաքուել էին հիւանդի մայրը Սառան, կինը՝ Մարօն, և և մի քանի բարեկիտ ու դրացի պառուաներ: Տղաներից ոչ ոք չկար բոլորը դաշտն էին գնացել՝ աշխատելու:

Սարգիսի վիճակը հետզհետէ վատանում էր:

Պառուաները գլուխ գլխի տուած՝ շքնառութեանը ուշք դարձրին, ու իրար երեսի նայելով՝ քահանային կանչելու ղըրկեցին:

Քահանան եկաւ: Խոստովանեցրեց հի-

Լանդին . ապա՝ կարճ ազօթ քից յետոյ՝ հազորդեց : Պատուաները՝ շարքով տերտերով աջը համբուրելուց յետոյ՝ դարձեալ շարուեցան անկողնի շուրջը :

Տէրտէրը , իր պարտականութիւնը կատարողի հպարտ գիտակցութեամբ՝ բազմեկ էր վերի կողմը , իսկ պատուաները խօսում էին անդադար , հերթ չտալով իրարու :

Ինչ պիտի խօսին պատուաները . . . իւրաքանչիւրը յիշում էր իւր անցեալը , մանաւանդ այն խորհրդաւոր բայէները , որոնք կապ ունէին հիւանդի հետ :

— Ո՛ւր են սրդիքս — հարց տուաւ Սարգիսը , աչքերը բանալով :

— Գաշան են , ս՛րդի , — պատասխանեց մայրը , — դուքան են գնացել , — և թաշկինակով ուզեց հիւանդի երեսը ծածկել , որ ճանճեր ջտափն վրան :

— Գութանը ս՛ր արան է — հետաքրքրուեցաւ հիւանդը :

— Աւզնոց , — պատասխանեց այս անգամ կինը , — Սառան այնքան էր ծեր , որ

այդ տեսակ բաներ յիշել չէր կարող :

— Հը՛ , Աւզնոց ս՛րաբ . . . արտասանեց Սառան ու նոյնպէս գլուխը քաշ՝ լսեց . . .

— Աւզնոց . . . աւզնոց . . . — նրանից յետոյ լսուեցաւ կնոջ ձայնը , և նա էլ լսեց . . .

Նրանց ընդհատ , բնոջատ , ու խորահառաչ արտասանութիւններից կարելի էր երեակայել՝ որ մի խորհրդաւոր բան կայ կապուած այդ արտի հետ :

Հիւանդի տաքութիւնը հեռո՛հեռո՛ սաստկանում էր . քրափնքի կայտակները վազում էին նրա ճակատի ասրիների կազմած կնճխաների ակօններով , վար իջնում դուրս ընկած քանքերով , գնում , ծածկուած արդէն թանճրացած ձեկմակ մօրուքի մազերի տակ :

Ինչո՞ւ էր հիւանդը , բայց երբեմն երբեմն անկապ խօսքերով իր վրայ էր հրաւիրում բոլորի ուշադրութիւնը : Նա սաստիկ տաքութեան մէջ զաւանցում էր . . .

Թուլացած յիշողութիւնը սկսել էր ուժովնալ , երեակայութիւնը վառւում էր ,

և անցեալ կեանքի կարեօր դէպքերը մէկը միւսից աւելի ուժեղ, աւելի կենդանի պատկերանում էին նրան:

Աւզնոց արաի յիշողութիւնը միայն բաւական էր նրա մէջ ծնեցնելու փոթորիկների մի հսկայ շարժում, և տառապանքի ու վայելքի մի ամբողջ աշխարհ:

Արտը իւր ամբողջութեամբ նրա սոււրբն էր. երբեմն մեծանում էր, ընդարձակւում, սահմանները կորչում էին տարածութեան մէջ, հեռուն երկնքին էին միանում, իսկ ինքը մինակ կանգնած արաի կեղրանը՝ ցօրեն է ցանում. իր ձեռները երկարում այնքան, որ ամենաընդարձակ հորիզոններն են հասնում:

Պատկերները իրար են յաջորդում, հիւանդը անքում է ծոնք, և քրտինքը հոսում է ճակատի ախոսներով...:

Պատաները և քանանան խօսում էին անդադար, երբեմն երբեմն միայն ուշադրութիւն դարձնում հիւանդի դառանցանքներին:

\*  
\*\*

— Այն ժամանակ եւս 14 տարեկան էի, մի տարուայ հարս չկայի դեռ, — դարձաւ Սառան տէրտրոջ և միւս սրտաւաներին. — ձեր միտքը չի գայ, դուք բոլորդ էլ ինձնից փոքր էք, մեր գիւղի ամենալաւ արտն է Աւզնոցը: Այդ տարին ամէն տեղն էլ բերքը շատ պակաս էր, հացը շատ թանկ էր, բայց մեր արտը Աւզնոց, շատ բերք տուաւ, աշխարհը զարմացաւ, կասէին իմ բախտն էր, «Թագա հարսի բախտը ուղուրով էր»: Մի շարաթ լուսահագին երկու ընկերով կը քաղէր, կը քաղէր չէր սրժներ: Եթէ մի քիչ էլ ուշանար՝ կը կծղէր, այլևս հատիկները կը թափէին:

Ամէն օր հօտադով կէս օրին ջուր ու հաց կ'ուղարկէի նրանց ուտելու. շատ անգամ գիշերներն արտը կը քնէին, որ չզուգանան խուրձերը:

Պատուը կանոց էր տանում յաճախ, ձեռքի մեղեդիկը քաշում դանդաղ և ուժ տալիս յիշողութեան ու շարունակում:

— Այդ օր հօտաղը յանկարծակի հիւանդացաւ, հաց տանող չկար, Տէ՛ր Հայր, — յանկարծ ձայնը վախեց պատուը, — դու մեր հայրն ես, ամօթ չլինի ասել, դու մեր հայրն ես.

— Քա՛ւ լիցի, քա՛ւ լիցի, — մօրուքը շարժելով վրայ բերաւ տէրտէրը:

— Ես այն ժամանակ ծոցւոր էի, — գլուխը թօթուելով շարունակեց Սառան, — կապեցի հացը, մի աման էլ թան, մի կուժ էլ ջուր. կէս օրին ճանապարհ՝ քնից գէտի արտ: Արևը մարդ կը վառէր. ճանապարհին նստելով՝ կանգնելով հասայ արաի բերան, զգացի որ տղան կը խնդար... կուժ ու հացը գետին դրի...:

Արաի հնձուորները տեսան խնձ, բայց չեկան. կարծեցին թէ երևի դարձեալ կը շարունակեմ ճանապարհը: Արաի եզրին ես ունեցայ իմ առաջին դաւակը, — սա էր՝ որ այնտեղ ծնւեց, — նա ձեռքով ցոյց տուաւ հիւանդին, — Մնացի այդտեղ, երբ հնձուորները իրենք եկան՝ մեզ երկու հոգի գտան:

— Հէ՛յ օրեր, տատ ու լսեց, լսեցին նաև միւսները:

Իսկ հիւանդը շարունակում էր իր դառանցանքը:

\* \*

Սասայի պատմութիւնը, հիւանդի կնոջ՝ Մարօի միջէլ յիշողութիւններ ծնեց և կարծես նրա պատմութիւնը շարունակելու համար՝ ինքը սկսեց.

— Դու խնձ բերիք հարս, բայց այդ ինչպէս եղաւ, զխանս, — դարձաւ նա սկեսրջ՝ Սառային, որ զբաղուած էր հիւանդի վերականգնող կարգը զսցելով, — ես 15 տարեկան կայի կամ չկայի, գարնան մի օր ուշացայ՝ արաից վերադառնալիս. լուսնակ զիշեր էր, ճիշդ այժմ էլ կը յիշեմ: Ճանապարհը երկար էր, դուրս եկայ ճամբից, անցայ ձեր արաի կողով: Այդ ուշ ժամանակ արաի մէջ մէկը ջուր կ'անէր: Բարձր ձայնով էլ ջրուորի խողը ձգել էր գլուխը: Ես նախ վախեցայ, հետոն կանգնեցի, բայց երբ եղանակից խմացայ որ հայ

էր, շարունակեցի ճանապարհը ուղիղ Աւրդ-  
նոցի եզրով:

Ջրուրը եկաւ, դէմն կտրեց ճիշդ ար-  
տի կողքին:

— Այնտեղ որ քիչ բա՞րձր է, բլուրի  
պէս, — հարցուց սկիսուրը հետաքրքրու-  
թեամբ:

— Հո՛ւ, հո՛ւ, ճիշտ այնտե՛ղ, հաստա-  
տեց հարսը:

— Ի՛մն էլ այն տեղն էր, դուրսը շար-  
ժեց պա՞ռուր:

— Յետո՞յ — հարցրեց քահանան՝ կար-  
ձեա խոստովանանօր հետաքրքրութեամբ:

— Դէ՛մն կանդնեց սո՛ւ, — ձեռները ուղ-  
ղեց դէպի հիւանդը, — սա այն ժամանակ  
կտրի՞ճ երխոսասարդ էր, բիխերը հողիւ կը  
մրային. ես էլ գեղեցիկ աղջիկ էի:

Մարօն կանգ առաւ փոքր ինչ ու  
ժպտեց:

— Աղջի՛կ, դու ինձ կ'առնե՞ս. — հար-  
ցուց նա:

Ես ամաչեցի, երեսս ես դարձուցի,

առանց մի խօսք տակու:

— Աղջի՛կ, ինձ չե՞ս հա՛նի, ես քեզ  
վազուց եմ հա՛նել:

— Թ'աղ ինձ, թ'աղ, ուչ է, տանը կ'ըս-  
պասեն. ասի ե ուղեցի սուսջ քաշիկ, բայց  
նա թեւս բռնեց:

— Աղջի ինձ կ'առնե՞ս, հը՞. — հար-  
ցրեց նա դարձեալ, թեւս ամուր իր ասի-  
մէջ բռնած:

— Որ հայրս, մայրս ասն, ինչո՞ւ չէ,  
թող, թ'աղ ինձ, — կրկնեցի ե ուղեցի հե-  
ռանալ:

— Բայց նա աւելի մտակցաւ ինձ, գրկեց  
և սկսեց այնպէ՛ս համբուրել, այնպէ՛ս համ-  
բուրել երեսս, ճակատս, շրթունքներս...

— Թ'ո՞ղ, թող ինձ, ամօթ է, ուչ է,  
երթամ, — կրկնում էի ես, բայց նա բաց չէր  
թողնում, միշտ համբուրում էր...

Յետոյ ինձ հեռ եկաւ մինչև գիւղ ե  
սպա վերադարձաւ:

Երկու օր յետոյ՝ դու եկար ինձ նշա-  
նեցիր, իսկ մի ամիս յետոյ ես հարս եկաք

ձեր սուն:

Նա բանց, վեր կացաւ հաց բերելու, որ քահանան ուտէր:

Հիւանդը աւելի ու աւելի կը անքար ու կը գտանցէր, յաճախ շարժում էր դարձում, որ վեր կենայ անկողնից, բայց ուժ չունէր, դարձեալ ընկնում էր, անդադար չուր էր խմում ու գուտիների անուսներն էր ստղիս:

Գրութիւնը ծանրանում էր: Իսկ քահանան գանգաղ ուտում էր կտր հացն ու թթու մածուն, բոլորովին պաշարին՝ դիտելով հիւանդի հեւոցը:

— Տղաները Աւզնոցի ա՞րան են տւիք. — հարցրեց հիւանդը աչքերը բաց աւելով:

— Հո՛ւ — պատասխանեցին միւսները, — երկուցեան կուգան, գիշերը արտ չեն մնայ:

— Ինձի տարէ՛ք այնտեղ. — բոլորովին անսպասելի կերպով շեշտեց ծերուկը:

— Ո՛ւր, ա՞րտ. — զարմացան բոլորը և

իրար երես նայեցին: Բոլորը կարծեցին թէ զառանցում է...

— Ի՞մ փափաքս այդ է, ինձ տարէ՛ք Աւզնոց. — կրկնեց հիւանդը աւելի հաստտ կզանակով:

Տարութիւնը աւելի էր բարձրացել, հիւանդի աչքերը հազիւ էին բացում, բայց խօսք չի հասկացող երեխայի պէս՝ նա իր պահանջը կրկնում էր և աչքերը դարձեալ փակում:

Շրջապատողները՝ ստափկ սաքութեան վերագրեցին նրա այդ պահանջը:

— Ծանապարհին կը մրտի և աւելի կը վատանայ. — սղոյում էր քահանան հեղինակաւոր կզանակով:

— Դէ շու՛տ, ինձ ա՛րտ տարէ՛ք, — լսուեցաւ դարձեալ ծերուկի խռարտ ձայնը:

— Չէ՛, ս՛րդի, չէ՛, — մայրը, ձեռները հիւանդի ձեռաստին դնելով ու փաղաքելով սկսեց համոզել. — հեւու է արտը, ձանապարհը ուղիղ չէ, առողջացիր, յետոյ Աստուած ողորմած է...:

Բայց հիւանդը կարծես չէր լսում նրա խօսքերը: Քիչ լսելուց յետոյ դարձեալ կրկնեց աւելի դայցայցած՝

— Ինձ ա՛րա տարէ՛ք, Աւզնո՛ց...

Վերջին բառը դժուարութեամբ արտասանեց, չրթունքները հազիւ էին շարժում: Նրան թւում էր թէ արդէն արան է, գոմէշները ստջևելից դանդաղ քայլերը փոխում են, խոկ ինքը մածը ամուր բռնած, սրքան ուժ ունի, սեղմում է, որ պէսզի խտիր գեանի կուրծքը մանի... Հողի չեքար պատուում ու մի կողմի վրայ շուռ է գալիս, իր սաների տակը բացուում է խորունկ ակօսը, երկրորդ դարձին լեցուելու համար... ժպտում է յաջողութեան համար, և իհիհի հաս հաս վանկերը հազիւ բացուող չրթունքից դուրս էին սանում:

Բայց երբ չրջապատի աղմուկից ու շարժումներից աչքերը բաց էր անում, գուժանի սիրուն պատկերը անմիջապէս ցնդում էր և իր առաջը տեսնում էր ան-

կողմը, քահանան, պատուներն ու աներես հաւերը, որոնք այնքան մօտիկ էին գալիս ու անկողնի վրայ բարձրանում:

— Ա՛րտ, ա՛րա, — լսուեցաւ դարձեալ հիւանդի հեւոցը. — ա՛խ, դուք Աստուած չունէ՞ք, իմ վերջին ցանկութիւնս է, վերջին կտակս... կտակս...

Ու թուչացած դրսխը դարձեալ մի կողմի վրայ թեքուեց, և այնքան յուզեց որ քիչ էր մնացել թէ լաց լինի:

Այս վերջին խօսքերը բոլորի վրայ էլ ազդեցին: Քահանան ու մի քանի պատուներ դուրս եկան փողոցը՝ դուան սուաջ խորհելու:

Հիւանդի դրութիւնը իրօք ծանր էր, կարող էր մեռնել, խոկ հիւանդի վերջին խնդիրքը չի կատարելը մեղք պիտի լինէր:

Որտչեցին նրան արտ տանել:

\*\*  
\*

Լուրը տարածուեցաւ խոկոյն ամբողջ գիւղը, կանայք ու երախաները իրար հա-

դորդում էին իրրև հեաաքքքրտկան նուրութիւն .

—Սարգիսը արտ կ'երթայ :

—Ասողջացա՞ւ.—զարմացած հարցնում էին շատերը, որոնք զիտէին նրա մահամերձ լինելը :

Իսկ շատերը հարցնում էին իրար՝

—Խօ չի՞ խնկթացել :

Մի սանդուղէ պատգարակ շինեցին անմիջապէս, անկողինը վրան տեղաւորեցին, հիւանդն էլ մէջը : Չորս հոգի ուսերի վրայ բարձրացրած դէպի դաշտը շարժուեցին :

Քահանան գնում էր առաջից, իսկ շրջապատի ժողովուրդը հեղհեղէ բազմանում էր : Թւում էր թէ մեռել են սառնում թաղելու . . .

Գիւղի աղտոտ փաղոցներից դուրս գալիս, թափօրն աւելի էր մեծացել : Կանաչք՝ երկխոնները դրկերնին՝ հեաաքքքրտթեամբ հետեւում էին և իրար հարցնում .

—Ինչո՞ւ է գնում արար .

—Կտակ է անում . . . —չնճում էր ըրնէ բերան և ոչ ոք բան չէր հասկանում :

Իսկ փոքրիկները արդէն կարծես մի մեծ տօնի մէջ լինէին, ուրախ ուրախ թոչկոտում էին, յետ ու առաջ վազում անդադար . . .

—Հէ՛յ, Սարգիս Բարէն արտ կը տանենք, հէ՛յ, — գտում էր բարձր ձայնով մի չարածճի, — կը տանենք, էտեղ թողնենք, հէ՛յ — կրկնում էր միւսը կարծես երգելով :

Մայրերը թէև աշխատում էին լուեցնել զաւակներին, բայց հնար չէր լինում . . .

Աշնան շունչը զգացւում էր արդէն, օդը ցրտել էր սկսել, դաշտի կանաչը չքացել էր բոլորովին, խոտերի երկար ցօղունները չորացել էին ու դեղնել, ողջ բնութիւնը կարծես մեռնելու պատրաստութիւն էր տեսնում . . .

Գիւղը սարալանջի կրճքին էր կպած, իսկ արտերը դէպի վար, աւելի տափարակ տեղ :

Թափօրը քանի առաջանում էր, այն-  
քան աւելի դէպի դառիվայր էր իջնում.  
հարթավայրը ընդարձակելով, աւելի հե-  
ռուներն էր տարածւում, գնում, միանում  
էր կապուտակ լճին, որի հորիզոններն ար-  
դէն հեռո՞ւն, շառ հեռուն ձուլւում էին  
ձիւնապատ լեռների շուրջանակի գծի հետ,  
որոնք կարծես դուրս ցցուած ծովի խոր-  
քից՝ համբուրւում էին երկնքի կապոյտի  
բարձրութեան հետ:

Օրը մթնելու վրայ էր, արևի գուն-  
դը, շարժւող թափօրին դէմ առ դէմ՝  
ձիւնապատ գագաթների վրայ էր խոնարհ-  
ւում:

Թափօրի առաջից շտապում էր քաշ  
հանան, որպէսզի կարողանան լոյսով տուն  
դառնալ. բայց պտտագարակի շարժիլը, մա-  
նաւանդ առուներից ու ձորերից անցնելը  
շատ էր դժուար:

Նախիրը բառաչելով զիւզն էր դառ-  
նում:

Թափօրը անցաւ նրա միջով, կովերն

ու եղները մի բոպէ զլուխնին բարձրա-  
ցրած գեանից անցորդներին նայեցին և  
դարձեալ շարունակեցին իրենց կերը...

Լուրը առաջուց գնացել էր արտը,  
տղաները գործերնին թողած՝ եկան դի-  
մաւորելու իրենց հօրը, և զարմացած  
հարցնում էին.

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ բերիք:

Բայց ոչ մի համուլիչ պատասխան:

Այս ու այն արտի մէջ ուրիշ աշխա-  
տողներ ու դաւթնւորներ հետաքրքրուելով  
թողին իրենց գործը և թափօրին միա-  
ցան:

— Հասանք, հասանք, — ճշայցին չա-  
րածճի տղաները, երբ քիչ էր մնացել ար-  
տին հասնելու:

Ճիշտ այն բլուրի վրայ, որտեղից և-  
րեւում էր ամբողջ արտը և որտեղի մասին  
խօսեցին երկու պառաւները.

— Վար առէք, — հրամայեց տէրտէրը,  
ճակատի քրտինքը սրբեց սև թաշկինակով  
ու ծանցու հիւանդի վրայ, որը հեւում

էր ուշագնաց վիճակի մէջ :

Հիւանդը աչքերը հազիւ բացեց, երբ պտտագարակը գետին դրին, կնոջ օգնութեամբ գլուխը վեր բարձրացրեց, զխոնց շուքը և զարմացած՝ հետևող ամբոխին նայեց . . . :

— Լա՛ւ է, շա՛տ լաւ, — հազիւ մըրմնջեց, — ս՛ր ևն որդիքս :

Տղաները շտապով պտտագարակին մօտեցան և հիւանդի ցանկութեամբ վերմակը վաեցին, վրան պատկեցուցին, գլուխը դէպի բարձր, իսկ ոտները բլուրն ի վար :

— Մօտեցէ՛ք, ս՛րդիք, — խօսեց հիւանդը աչքերը հազիւ բանալով :

Հինգ, մէկը միւսից կտրիճ երիտասարդներ, կարգով հօր կողքին շարուեցին, իսկ ձերուկը լուռ ու մունջ առաջն էր նայում. սրտը երեւում էր իւր ամբողջութեամբ :

Արտի երեք եզրերից անցնում էին ա-

ռուներ սուսա ջրերով : Առուների երկու ափերին բարդի ծառերը բարձրանում էին դէպի վեր : Տերևները դեղնեղ էին, թեթև քամույ սրկ էին դալիս ճիւղերից ու օրօրուելով օդի մէջ՝ գետին էին ընկնում . . . :

Հիւանդը նայում էր այդ ծառերին, յիշում էր այն օրերը, երբ իր ձեռքով անկում էր, դեռ հնարքիկ, մտապաշ ճիւղեր էին, իսկ այժմ, նրանք հաստատաբար մտաներով ամառը գետնին ևն կպկ, իսկ ի՛նքը . . .

Եւ անցեալը, որպէս մի չքնաղ երազ, շոյում էր նրա թոյլ յիշողութիւնը : Պտտկերները նախ վառ ու անուշ ապա ազօտ՝ հեռզհեռէ գնում, տարածւում էին իր արտի եզրերից հեռու, ջրի առուից էլ հեռու, ուր արեւը լեռների գլխին էր հանգստանում . . .

Մի բարդենու դեղնած սերև՝ քամուց բշուելով՝ եկաւ վերմակի եզրին ընկաւ, ձերուսին սերևի՛ լվայ նայեց ու լուց . . .

— Որդի՛ք — դարձաւ նա տղաներին, — ես կը մեռնիմ, ձեզի մի վերջին խրատ. ինձի այս հողը ծնեց, այս հողը պահեց, ձեզ էլ այս հողը ծնեց, այս հողը պահեց:

Մերունու. ձայնը հազիւ էր դուրս դուրս, բառերը կարտուում էին նրա շրթունքներէ վրայ:

Դեղին փոշին բռնէլ էր չորս կողմը, բոլորը անկողնի շուրջը խոնուած ուղում էին լսել ձերունու խօսքերը, բայց նա շատ կամայ էր խօսում:

Վերջապա էր. թւում էր թէ հիւանդի արդէն սոզոյն երեսը աւելի դեղնեկ էր, ոսկրացած այտերը դուրս էին ցցուել, մեծ աչքերը խորն էին ընկել: Ճակատի աւկօսները կարծես հարթուել էին, միայն աչքերը բանալիս երբ յօնքերը վեր էր բարձրացնում հաւաքւում էին և ալիքանման ծածկում լայն ճակատը: Ճերմակ մազերը բոլորովին բաց՝ շարժում էին ամենաթեթեւ հովից...

— Որդիք, քիչ լռեցուց յետոյ չարու-

հակեց, դարձեալ, — իմ քրտինքը ևս այստեղ թափեցի... իմ մարմինն էլ կուզեմ որ այս հողի մէջ թաղուի...

Հիանդի ձայնը կերկերաց դարձեալ, ու երկու կաթիլ արցունք փայլեցին նրա ոսկրացած այտերի վրայ. ապա լալկան ձայնով հեկեկաց.

— Գուք էլ ինձպէս արէք, որդիք, Աստուած թող օրհնէ ձեզ...

Աջ ձեռքը երկարեց, գետնից մի պղտուռեց հող առաւ, և դողդոջուն ձեռքերով մօտեցրեց շրթնակին, բերանը դողդողալով բացաւ, ու երկրացող ձեռքերով հողը բերանը ձգեց...

— Օխ, քո հոտին, քո համին դուրբան, հո՛ղ... մնացէ՛ք հողին կպած... ինձի այս տե՛ղ թաղեցէք...

Եւ հայեացքը ձգեց դէպի արեւմուտք: Մնթարթ աչքերով նայում էր արևի կտոր գունդին, որ կարծես ծովի մէջն էր մըտնում հեքոս մղումով...

Բոլորն էլ դէպի այն կողմը նայեցին,

բայց քիչ յետոյ՝ երբ աղջտմուղջը արեւոյ,  
միայն ձերուկի նայումքն էր գնացել ա-  
րեւի հետ միասին...

\* \*  
\*

Յաջորդ օրը, սուսուօտեանն արշարոյ-  
սին՝ արեւի սուսջին ճառագայթների տակ,  
նոյն բլուրի փոքրիկ հողաշերտի վրայ բա-  
բակ ու երկար ծուխ էր բարձրանում...  
Եւ ծխի քովը, մի պատու, ծնկաչոք,  
զուսը հողին կայրած, ազօթում էր...  
— դա Սառան էր, որ արեւի ծագումից  
սուսջ եկել, խունկ էր ծխում իր որդու  
հոգուն... ,

Իսկ նրա շուրջը՝ մի քանի փոքրիկ-  
ներ անփայլ կերպով խաղում էին արա-  
ծող գառնուկների հետ. — դրանք՝ մեռած  
ձերուկի թռնիկներն էին...

(1909)



## ԵՂԵՌՆԻ ԳԻՇԵՐԸ

— Չէ՛, ձեզնից ո՛չ մէկն էլ չի հասկա-  
նում, ինչպէս որ պէտքն է, գուք բոլորը  
էլ սխալում եք, — գոչեց Արսէն և տե-  
ղից վեր թռաւ, աջ ձեռքը ուժեղ թափա-  
հարեցով: Նա՛ որ մինչև այդ բուլէն բնա-  
ջէր մասնակցել վիճարանութեան, այլ լուս-  
մտիկ էր արել բոլոր ընկերների խօսքերն ու  
դատողութիւնները՝ շարունակեց՝ քիչ կանգ  
առնելուց յետոյ .

— Կայ մի ուժ, մի զօրութիւն, որը  
ես չեմ կարող իր էութեան մէջ բնութել,  
բայց կայ անպայման այդ թագուն հուրը,  
որ նրան պահում է այսքան տառապանք-  
ներից յետոյ էլ, պահում է, և այն էլ  
միշտ ընդունակ զաղափարական մղում-  
ների: Մի որևէ ժողովուրդ լաւ ճանա-

չելու համար, պէտք է իջնել նրա հոգու խորերը, պէտք է ապրիլ նրա մութ քաղանձաւներում, եթէ այնտեղ՝ ամենասարսափելի խաւարի ժամանակն էլ, որ մարդկային միտքը կարող է երեւակայել, եթէ այնտեղ նշմարես մի կայծ, մի կրակ՝ նշանակում է, նշանակում է...

Վերջին խօսքերը անհասկնալի մնացին, որովհետեւ դուք բացուեցաւ և ընկերներից մէկն էլ ներս մտաւ ու տեղաւորուեց ասթաներից մէկի վրայ:

Կամպը վաւերում էր սեղանի վրայ, և սենեակի մէջ անկարգ ու ցրիւ նստած ընկերները ծխի քուրաները բաց էին թողնում շրթունքներից անխոյժ կերպով՝ իւրաքանչիւրը խորասուզուած իր մտքերի մէջ: Արեան ընկերների մի հաւաքոյթ էր, ուր մտերմական կարծիքներ էին փոխանակում լոկ...

Բոլորն էլ տառապանքի հնոցից, արեան ու հրի միջից դուրս պրծած երիտասարդներ էին, վիճում էին իրենց ժողո-

վերջի հագեկան կարողութիւնների ու յատկութիւնների մասին:

Խօսակցութիւնը նախ պարզ կերպով սկսաւ, բայց հետզհետէ աւելի լուրջ բընաւորութիւն ստացաւ:

— Խնդրե՛մ— երկու ձեռները բարձրացնելով Արսէնը, լսեցրեց ընկերների ընդդիմախօսութեան փարձը— մինչև այժմ ես ոչինչ չասացի, մի քանի բոլոր լսեցէք ինձի կը պատմեմ միայն մի փոքրիկ միջոցէպ իմ կեանքից, կըրակացութիւնը ձեզ թողնելով. իւրաքանչիւրը թող մտածէ ինչպէս կամենայ:

Բոլորն էլ ականջները լարեցին, որովհետեւ բոլորին էլ հետաքրքրում էր նրա արկածալից կեանքը, որի մասին սակայն շատ քիչ էր խօսում:

«Տառներկու ժամ անդադար կուռեցի, այս ասելով, Արսէնը նստեց, ծխախոտ վառեց ու շարունակեց: Նրա թուխ դէմքը, որ կանգնած ժամանակ սքողում էր լուսամտի մէջ, ստուերի մէջ, այժմ:

աւելի որոշ նկարուեցաւ լոյսի տակ և նրա անորոշ արտայայտութիւնը հեղհեղեղ կեդրոնացաւ ու վճռական դարձաւ :

«Թէ ի՞նչպէս սկսեց՝ այդ թողնում եմ, քանի՞ նազարով էին մեզ պաշարել, այդ էլ չգիտեմ, հեռանալը թնթանօթներ էլ ունէին, իսկ մենք տասն և հինգ հոգի էինք :

«Փիւղը սքանչելի զիրք աւնէր, եթէ փամփուշար չվերջանար, դեռ երկար կը զիմանայի, — այդ չէ՛ կարեորը, — ընկերներից վեցը կոպրի մինչև կէսօր, մի քանի կարծ աղերք հէնց կողքիս ընական... է՛հ, թողնենք մանրամասնները — ամբողջ կուռի ընթացքին գիւղացիները հիանալի էին պահում իրենց, ջահիլ աղջիկները, հարսները, նոյնիսկ պառուհները քարերի միջից փորտող տալով հաց, ջուր էին հասցնում այն աղաներին, որ գիւղից դուրս բլուրների վրայ կուում էին :

«Գնտակները կարկուտի պէս էին թափւում, թնթանօթի ուռերը իրենց ոռնոցներով պայթում էին գիւղի երդիքնե-

րի վրայ, զօրքնու խուժոնը արդէն հեռուից մրջիւնի պէս բռնել էր դաշար : Ի՞նչ էին մտածում կամ զգում իմ ընկերները, եթէ ասեմ, դուցէ սխալուեմ — բայց իմ մասին ճիշտը կարող եմ ասել, այժմ լսկ յիշողութիւնը ինձ շատ աւելի է սպասափեցնում, քան այն օրուայ իրականութիւնը, — ես կատաղել էի, գնատկը աստուած էր, արիւն էր պէտք... :

«Հրամաններ էր միայն, որ արձակուեմ էի, իսկ իմ ընկերները, կողքիս գնդակահար ընկնում էին, արիւնաթաթախ ճանկերով գետին էին ճանկուում, ես անվերջով փամփուշտակոյն էի քանդում վրայից, հրացանը վերցնում մի ուրիշին տալիս, նրան որպէս անպէտք իր զէն էի չպարտում : Ես դադանացի էի... :

«Բայց է՛գ չէ կարեորը, անփոյթ կերպով աւերացրեց նա, երեկոյան մութը կոխելուն պէս այնպէս կարգադրեցի, որ երիտասարդներին հետս առած, սպանուածների գէնքերն էլ անզէններին բամբեցի,

և թշնամուց աննկատելի կերպով թողի գիւղը ու լեռը բարձրացայ: Թէ ինչ բարեխղճութիւն էր այդպէս վարուիլը իմ կողմից, այդ մասին էլ չեմ խօսի, ձեզ բարբիղ էլ ծանօթ է խիղճը հանգատացնելու մեղմացուցիչ պարագան: . . .»

Նա քիչ կանգ առաւ և ապա շարունակեց.

«Ամէն կողմ զօրքերը ցրուած էին ինձ փնտաւելու, ոչ մի գիւղ մանկը հնարաւոր չէր:

«Բայց ես իմ ետև թողել էի մի սամբոջ գիւղի անմեղ ժողովուրդը գազաւնային բնազդներով յղի խաժամուժ վո՛ւմակի առաջ բոլորովին անպաշտպան. Բարանձաւում ապաստանած՝ երևակայում էի այն գազանութիւնները որ տեղի էին ունենում այնտեղ, իմ բացակայութիւնից յետոյ: Նա սանջւում էի հոգեպէս. — և նա ատամները կրճտեց, աջ ձեռքը բուռնցք շինեց, սեղանի վրայ դրաւ, մի բոպէ կանդ առաւ, ապա շարունակեց. — Բայց

խօսքը մեր մէջ, ինչ կարող էի անել, փամփուշաները արդէն վերջանալու վրայ էին . . .

«Չերկարեցնեմ, մի օր յետոյ, այն վայրից ուր ես կուռել էի, այո՛, չի դարմանաք, ճիշտ այն գիւղից, ուր մի օր ամբողջ՝ գնտակ էի ուղարկել թշնամուն, մի խումբ մարդիկ եկան ինձ հրաւիրեցին դարձեալ իրենց մօտ.

— Պարսն, — խօսեց նրանցից առաջինը, — արի մեզ մօտ դարձեալ, ուրիշ գիւղ մի՛ գնա, ամէն տեղ զօրքեր կան, քեզ կը բռնեն, արի մեզ մօտ:

— Պարսն, ճիշտ կատէ — առաջացաւ միւսը, — կուռի ժամանակ մեզ մօտ էն դուց յետոյ էլ մեզ մօտ ու մեր մէջ, գիւղն էրեցին, թայնեցին, սպանեցին, տարան, ամա մենք էլի մէկտեղ կապրինք:

— Պարսն, մենք էլ վախ չունինք, ամեն բան տարան, էլ կորցնելիք չունինք . . .

— Ինչն էք ասում, բացականչեցի,

դեռ վառօդի հոտը չի կարուել ձեր դի-  
զից, դեռ այրուած աները ծխում են,  
դուք ինքներդ ոչինչ չունէք ուտելու,  
ձեր մեռելները դեռ անթաղ են, ուզում  
էք աղէտը նորից կրկնուի, ուզում էք...

«—Ո՛չ, պարոն. — խօսեց նրանցից  
վերջինը, որ աւելի մօտեցաւ, չորքէչք  
գեանի վրայ առաջնորդով, բոլորս էլ  
այրի մէջ խնամ գեանի վայ ենք բաղ-  
մել, — մենք էլ վախ չունենք, ... իսկ  
դուք ջանիւններ էք, կարիճներ էք, ձեզ  
կը գաննեն, եկէք մեզ մօտ, մենք էլ վախ  
չունենք... ջուրը ընկնողը անձրևից չի  
վախնայ...»

«Չնայած իմ ընդդիմութիւններին,  
այնուամենայնիւ նրանք պնդում էին ի-  
րենց ասածի վրայ։»

Համաձայնեցի վերջապէս սուլթը ընկ-  
նելիս՝ նրանց մօտ իջնել։»

Արտէնը փոքր ինչ կանգ առաւ, կար-  
ծեա ահաճութեամբ՝ մի ինչ որ անսխորժ  
տեսարան ուզեց յիշել, հազայ ու շարու-  
նակեց։

«Լուսնեկայ գիւղեր էր, ողջ դաշար ծը-  
փում էր խաղաղութեան մէջ, թռչուն չէր  
չարժում։ Գիւղիները մեր արբապետու-  
թիւնն էր, ս՛վ կը համարձակուէր ֆէտա-  
յաւ անից դուրս դալ անից։»

«Ի՞նչո՞ք լեռնից, այսօր աւելի դժու-  
շութեամբ, անցանք հաբթ սասխառանով,  
ուր ճանիկն էր միայն ճաււած, կանաչ խո-  
տերը ճղմուած էին մեր ստներին տակ, ու  
մեր քայլերը բարբաւլին անձայն դարձնում։  
Լուսնի լոյսն էր միայն արդելք լինում մեր  
աղտաւ շարժումներին, հեռուից կարող էին  
նկատել մեզ։»

«Գիւղը այրուած էր դեռ, հեռուից  
լուսնի լոյսով նկատուած էր բարձրացող  
ծախը։ Գիւղին մօտիկցանք, քարաշէն ե-  
կողեցին էր միայն կանգուն մնացել։ Գը-  
բան ասա՞՞՞ փոքրիկ նրապարտիկ վրայ հա-  
ւաքուել էր ամբողջ ժողովուրդը, մեծ ու  
փոքրը։»

«Թշուառութիւնը լաւ հասկնալու հա-  
մար պէտք է աւանել, անպատճա՛ն պէտք

է անանկ — և Արսէնը դարձեալ կանգ առաւ, դէմքը աւելի մտայեց, կարծես անցեալի աղետարչ պատկերները նկարուցին նրա յիշողութեան մէջ, ուզեց ցընցըիլ, բայց իր պաղարիւնութիւնը պահեց ու շարունակեց, ձայնը մեղմացնելով.

«Մեծ մասը, վաստահցեում եմ ձեզ, չէր լայիս: մտայ դէմքերով նստանկ, շարուել էին պատի տակ, մի մասը վեր կացան անդերից եկան ինձ շրջապատեցին, պատու մամիկները մանաւանդ աշխատում էին իրենց դարդը անպատճառ ինձ պատմել, իրաւի, կարծում էին թէ կարող եմ մի ճար անել: Մայրեր կային, որ իրենց որդիների մահուան համար էին լայիս: Մի քանի ընտանիքներ կուչ կկամ իրարու վրայ, կարծես ինչ որ իրերից կոյտեր կազմած՝ դէս ու դէն թափուել էին պատի տակերից քիչ հեռուն:

— Պարոն, գիւղը ոչինչ չթողին, պարոն, իմ աղջիկս տարան, պարոն, իմ միջուճարս սպաննեցին — խօսում էր իւրա-

քանչիւրը... և այդպէս անվերջ դանդաճներ...

«Ես տանջւում էի հողեպէս, կուռի բոպէն այնպէս ճնշիչ չէ, սարսափը յետոյ է յայտնի դաւնում: Մտածում էի... բայց ի՞նչ կարող էի անել...:

— Նահաւասիկները թաղեցի՞ք, — եղաւ առաջին հարցս:

— Չէ, — պատասխանեցին կարծես միտախն — մի մասը ժամն են, ուրիշները դուքս, կ'ուզե՞ս անանկ պարսն, և սխեցին անուններ թուել...

«Ես ոչինչ չպատասխանեցի: Ես էլ նշուանցի նրանց հետ եկեղեցու պատի տակ: Կուռիներ լուսաւորում էր մեզ բոլորիս, բոլորս իրար անանում էինք, բոլորս իրար երես նայեցինք, բոլորս էլ լսեցինք...»

«Միշերացին ստան քամին փչեց, բոլորիս մարմնով էլ մի սարսուռ անցաւ, անթութիւնն ու տանջանքը, վիշտն ու լուսնի լոյսը...»

«Լուռութիւնը ճնշիչ էր... բոլորը սպա-

տում էին որ խօսեմ, բայց ի՞նչ խօսելի, ի՞նչ կարող էի խօսել, բերանս էլ չէր բացւում, ևս մտածում էի, բայց ուզեցս էլ կարծես քարացել էր...

«Թւում էր՝ թէ ինձ բերին այտուղ գասելու:

— Է՛ր, պա՛րոն — ճայն տուեց մեր շարքում նստածներին մէկը, որի դէմքը չի տեսայ — ի՞նչ կը մտածես, էս մեր վերջը ը՛նչ պիտի լինի... հը՞, մենք ի՞նչ պիտի անենք...

«Նա բեց, բեցին ամէնքն էլ, բեցի նոյնպէս և ևս: Բայց լուսնի լոյսը աւելի ու լաւելի էր լուսաւորում և մեր ամբողջ թշուառութիւնը իր հսկայ մերկութեամբ մեր առաջն էր. և մենք իրար կրկնէինք նույնում...

«Երեխաները նւում էին, վիրաւորները հառաչում, դիւզը ծխում էր:

— Հը՛, պա՛րոն — ճայն տուեց միւս կողմից մի ուրիշը — մենք ի՞նչ պիտի անենք...

«Եւ դարձեալ լուսիւն... և լուսինը մեզ բոլորիս լուսաւորում էր...

«Կարծես կապար էր այս լոյսն էլ, ամբողջ միջնորտն էլ, որ այնպէս սաստիկ ճնշում էր ինձ վրայ:

«Հաշար սնդամ զղջացի այդտեղ գալում, ուզում էի փախչել, բայց ի՞նչպէս, ո՛ւր...

«Եւ երբ մի վիրաւորի հառաչ կամ արնքայ էր ակունջիս համնում, ևս ամբողջ մարմնով սրտիւմ էի: Նայում էի գետին, առաջն սողունների պէս գետնի վրայ գետում էին քաղցած կրկնաներ, մայրերի փեշերին փաթաթւում, հայ աղաղակում: Գլուխս վեր էի բարձրացնում՝ այբող արների ծուխն էր քուլայ քուլայ կրկինք բարձրանում և այդ բոլորից յետոյ՝ բոլորը միասին կարծես խօսքները մէ՛յ արած՝ ինձ հարց էին տալիս:

— Մենք ի՞նչ պիտի անենք...»

Արտէսը, կարծես իր այդ անկարների վիճակը պատկերացնելու համար թեկերը

խաչածև ծաղկեց կուրծքին և մի բողբ մնաց լուռ, ապա շարունակեց խասօրին.

«—Բայց ի՞նչ էք կարծում, նրանք որոշել էին իրենց աննկրքը: Ասա՞ ի կառմի ալեհեր ձերուկ, կանգնեց կեղբորնում, ճիշտ իմ դիմաց, ձեռները բարձրացուց, ձերմակ մօրուքը շոյեց, ապա աջ ձեռքը մէջքին դրաւ, ու գլուխը ծուած՝ երևոխ նայեցաւ.

— Դուն, պո՛րան, կը պարծենաս թէ գիտնական ես, քեզ կը հարցնեն ի՞նչ պիտէ աննք, պատասխանի՛ր, բայց դու չե՛ս կարող պատասխանել, դեռ չա՛տ բան կայ որ նոր պիտի սորվիս:

Նա խօսում էր ծանր և հպարտ շեշտով,

— Ի՞նչ կը խոչտա, պարո՞ն — շարունակեց ձերուկը ինձ ուղղելով խօսքը. — մեր երկինքով չա՛տ ամպեր է եկել, կարկուտ թախել, անշեղ զնացել... էս մաղերով — ձախ ձեռքը տարաւ գլխին — չա՛տ քամիներ է անցել... էս աշխարհ որլին է

մնացել... այսօր կորցնելիք էլ ոչինչ չունինք... մենք գիտնք ինչ պիտի աննք...

— Ի՛է՛ այժմ սկսեցէք, ս'ըզիք, — զօրավարի շեշտով հրահայեց նա, դիմելով հնուուն կեցող մի խմբակի:

«Եւ մի քանի բողբում՝ կիսավառ գերաններ ու փայտի կտորներ իրար վրայ դիզուեցան փոքր հրապարակի մէջտեղ: Ծուխը սկսաւ բարձրանալ, ճաճանչաւոր բոցը աւելի լուսաւորեց տանջուած դէմքերը և ցնցատիներով հազիւ ծածկուած մարմինները. ամէնքն էլ շարժուիլ սկսան իրանց տեղերից: — Եւ յետոյ, չի գիտեմ որ տեղից, հրապարակ եկաւ դհօն ու գուռնան:

«Կոչա ու անդնդային ձայնը յանկարծ թնդացրեց օդը, վայրենի պարն ու քրքիչը սկսաւ, ահաւոր արիւնից յետոյ...

«Ցնցեցի, փղձկեցի, չգիտեմ ծիծաղեցի՞ թէ լացի. վեր թռայ, հեռացայ խմբից և դիմեցի դէպի մօտակայ բլուրը...

«Ի՛նչ թնդում էր, զուռնան ձուռմ,

և ժողովուրդը, կին ու աղամարդ, շուրջ պար բռնած դառնում ու դառնում խօսական ոգևերութեամբ...

«Ն. կրակէ լեզուները սրապատյա երկինք էին բարձրանում, ոգևերութիւնը հետագհատէ կատաղութեան էր փոխւում, դժօրի դատարը և գլխահայի ճշպը մարտական ինչ որ խելապար խնկմութիւն էր ներշնչւում, կատաղութիւնը ստատկանում էր. արեան ու արշաւնքի պինտութիւնից՝ թռչկատում էին գեանից բարձր, սրբան հնար էր, ձեւների ու մարմնի աչանդակ շարժումներով իրար էին գերազանցում, ցնցոյթները թափւում էին մարմինների վրայից, ամբողջ կակրդով արձակւում էին վայրենի աղաղակներ, գրոնց միանում էր մանուկների լացը և կիտամնս վիրաւորների աղեխարշ վայնասունը...»

«Նս հեռուից տեսնում էի այս լսւորը:

«Լուսինը լուսաւորում էր, և կրակը աւելի էր գունաւորում վայրենի համարզը իւր յուսահատ ոգևերութեամբ, երբ մարդիկ քրքում են, ապրում են ուրախու-

թեան արբեցութեամբ, երբ այլևս ոչինչ չունին կորցնելիք, ոչինչ...»

Աստղերը պէժին էին տալիս երկնքի կապուտակի վրայ, իսկ կախարդական պարը դեռ շարունակւում էր...

... Արշարոյսը բացուելու վրայ էր...

Մենք պէտք էր թաքնուէինք...»

... Արտէնը լսեց, ներկաներից ոչ ոք ոչինչ չէր տեսնում: Քիչ շեռոյ՝ ընկերները մէկիկ մէկիկ գաշաւեցան սենեակից:...

(1909)



## ԴԱԻԱՃԱՆ ԿԻՆԸ

(Ձեռքս խնկած յիշատակարանի թերթիկները թէև մեծ մասը փակել էին խոնավութիւնից, բայց կարողացայ քաղել հետևեալ կտորը:)

«Մասնութիւն էլ է անու՛մ».— սկսու վերջին օրերը լուր չբջել հասարակութեան մէջ:

Մասնիչը մեր գլխուղեղերից մէկի կլինն էր: Ո՞վ չէր ճանաչում Այթմունին, նրա գեղեցկութիւնը ողջ գաւառում անուն ունէր, իրենց գիւղի գարուն էր նա. մեծ, պատուաւոր ընտանիքի էլ աղջիկ: Բայց իր նամունն էլ, իր գերդաստանի նամուսըն էլ նա գեաին գրեց այն օրից, երբ քիւրա յայտնի աւազակ ու չարագործ Սհօի հետ նրա քէօչկը փախաւ:

Կսկիծը մեծ էր բոլորի, բայց առաջին փախուստի խայտառակութեան վրայ մի երկրորդն էլ աւերացաւ.

—Նա մասնիչ է.— սա արդէն սուկացնում էր բոլորին, ծնողները ամօթից գեաին էին անցնում. ողջ գիւղը, ողջ համայնքը զրգոնում էր, և նրանից իբրև մասնիչից՝ փախնում էին, նորանոր ագէաներ էին սպասում...:

Հաւարն ինձ ընկաւ:

—Մի ճա՛ր, պարո՛ն Լեւոն, — աղերսում էր ամուսնու եղբայրը Ահարօն, դէմս կանգնած իր ընկերների հետ.— նա մեր նամուսի վրայ թքեց, նա մեզ խայտառակեց, սպաննեց, մի ճա՛ր, պարո՛ն, այդ սատանայից ազատուելու:

—Մեր տան միջից մասնիչ, Տէ՛ր Աստուած.— մազերը փետում էր ծերուկ մայրը.— թող ևս չուտ մեռնէի, և այս բանը չտեսնէի, չսէի...:

Իսկ ամուսինը, Արաաչ, բոլորովին լուռ, մի անկիւնը նստած՝ ուղիղ գեաին

էր նոյնում:

— Յեզայիոբաւական դատաստանը անդար է, սվ կուզէ լինի. — կարուկ կերպով յայտարարեցի ես, — դաւածաններին, մասնիչներին մա՛ն է, ուրիշ ոչինչ:

Մայրը աւելի սկսաւ լսել թէ մտաւորը փետեղ իսկ հայրը, մի ծերուկ խորխոր գիմազծերով, տեղից վեր կացաւ, դէպի գուռն ուղղուեցաւ ու շեղակի գէպի կնձ դարձաւ:

— Նա է՛լ իմ աղջիկն չէ՛, չէ՛, աղջիկս չէ՛, արե՛ք, ինչ որ արդար է...:

Վճռակամութիւնը գործի յաջողութեան կէտն է գրեթէ. ուստի հրամայական ձևով Ահարանին դարձայ:

— Վերջուր քեզ հետ ընկերներ մեր ամենակարիչ աղաներից, ինչ գէտով էլ լինի, մինչև երեք օր այդ քամ աղջիկը կամ իր գլուխը իմ ստաջ պիտի լինի:

Խիստ էի խօսում, բայց զգում էի, որ նրանց սրտից կամ խօսում: Մի խօսքի էին սպասում, որ ամէն զոհողութիւնով

իրենց ճակատից մտքէլին այդ արասը:

\* \* \*

Ես չէի տեսել Ալթունին, բայց ում հետ որ առիթ էր լինում խօսել նրա մասին, աստուկական գոյներով էին նկարագրում նրա գեղեցիկութիւնը. իսկ շատ յաճախ՝ երբ այլևս խօսք չէին գտնում նկարելու նրա հասակը, նրա գէտքը, նրա անուշ լեզուն. — շրթունքները խածում էին, և հայեացքը անխոյժ՝ հեռուները ձգած՝ գլուխը շարժում ջ ու ձախ — ինչպէս անուամենամէն անգամ՝ երբ մի անպատմելի սքանչելիքի մասին են յիշում:

Այնքան էր խօսում նրա մասին, Ալթունի լսու և վատ յատկութիւններու մասին, որ հեազհեա է իմ էլ հետաքրքրութիւնս շարժել սկսաւ, և ցանկութիւն ծնեց մէջս անպատճա՛ռ տեսնել նրան:

Դրա համար էր գուշէ, որ վերջին օրը երբ ամենախիզախ փորձը պիտի անէին, երբ հարիւրին կննտունը հուսանակա-

նութիւն կար, որ հենց այդ փորձի ժամանակ կարող էր սպանուել, յատուկ պատուիրեցի աղաներին որ աշխատին ամէն կերպ, ողջ ձեռք ձգել ու փակցնել:

Նոյն գիշերը ես իմ խմբով անասու բարձրացայ:

Կէս գիշերն անց էր արդէն. բոլորը քնել էին կանաչ խոտերի վրայ փուռած, հերթապահ զինուորներին էլ արձակեցի քնելու:

Իմ քնը չէր տանոււմ. ես միայնակ շրջոււմ էի ծառերի ստուերների ստի, կանաչ խոտերի վրայ կոխոււմ էի լուսնոյ՝ ձիւղերից արձակած՝ ստուերները, այդ ընդհանուր խորհրդաւոր լուսեան մէջ մուսլ մտածումներով սպասոււմ էի ձեռնարկի ելքին:

Այթունի գեղեցկութիւնը լուրջ կերպով զբաղեցնոււմ էր ինձ, աւանց տեսնելու՝ մի տեսակ համակրութիւն էի ըզգոււմ դէպի նա և իբրև դաւաճանի՝ նրա ստանալիք պատիժը՝ սկսել էր մտատան-

Չաթիւն պատճառել ինձ:

Չեւնարկը համարձակ էր ու վտանգաւոր, արդիւնքը կարող էր աղետալի լինել ու միայն գնացողների համար, այլ ընդհարձակուել, տարածուել և շրջանի վրայ, ու կոտորածների և կոխների նոր դուռ բանայ:

Մնօի պալատը, որ դուռ քրդարնակ մի գիւղի կողքին էր լուսն լանջին կպած՝ շրջապատոււմ էր բարձր պարիսպներով ու ամուր դռներով: Տանեակ Քիւրանը գլխոււմ՝ միշտ հսկոււմ են գիշեր ու ցերեկ շաշի ու իր կանանց պահպանութեան վրայ:

Սպասոււմ էի անհամբեր... համբոււմ էի քայլերս, երևակայոււմ էի քէօշկ մանկը՝ ընդհարոււմը երկու կողմից, վիրաւորներն ու սպանուածները, բայց Այթմոււմը...

Եւ նրա վրայ կանգ էր աւնոււմ երևակայութիւնս, ինքս ինձ համոզոււմ էի, թէ կարող են կենդանի փակցնել, բայց շատ դժուար էր թուււմ այդ, և ես մի

կողմից ուրախանում էի, որ եթէ սպանուէր, գործը այդպիսով էր կը վերջանար և գայթակղութիւնը կը վերնար մէջատեղից իսկ միւս կողմից անորոշ, սիրտս հագիւ ծակազ կսկիծ էի զգում, թէ ինչո՞ւ մի անգամ զոկէ չտեսնեմ նրա այդ քոսն թուշական զեղեցկութիւնը...

Մեր տեղը ընդամէն մի քանի ժամուայ հեռաւորութիւն ունէր Սհօի քէօշկից, այնպէս որ՝ ազատուելուց յետոյ՝ զեռ լոյսը չբացուած նրանք մեզ մօտ պիտի լինէին։ Իսկ եթէ մինչև առաւօտ չդառնային, նըշանակում էր կտորուած են բոլորը և նոր վրէժինդրութիւնների նոր դռներ էին բացուելու...

Ժամացոյցին նայելի լուսնի լոյսի տակ, զեռ բաւական ժամանակ կար լուսանալու։

Գիշերուան խոնաւութիւնը աւելի ու աւելի զգալի սկսու դառնալ. փաթաթուելի, երեքտակ պատրմատաշը աւելի սեղմ կապելի և քայլերս աւելի արաշտոցրի։

Ականջներս լարած՝ լսել էի ուզում մի շշուէկ, որ մերանց նշանի աղղարարը լինէր բայց ուշանում էր. իսկ ես աւելի անհամբեր էի դառնում. ստատիկ փափաքում էի ծխել, բայց կրակի երեպուց զգուշանում էի։

Մէկ մէկ կանգ էի աւնում, հեռուն, ծառերի վրայ չարժուող թուշուների թըրփըրացը ս ե է մէկի մօտենալուն նշան համարում. բայց չուստով ամէն ինչ լուււմ էր և նորէն՝ նոյն ստուերտտ խաղաղութիւնը։

Վէրջապէս...

Սիրտս թրփրտաց. հեռուից, շատ հեռուից արձագանգ տուաւ անտառի խորութեան մէջ ինչ որ գայլի աւնոց...

Դա նշան էր թէ մերանք են...

Քնածներից երկուքին արթնացրի եւ առաջ զրկեցի շտապով ստուղելու, իսկ ես դարձեալ անհամբեր սպասում եմ փոքր ինչ թեթեցած. բայց ուղեղումս բեւեռուել է դարձեալ նոյն հարցը. — «Այլթուներ ս՞ղջ

է արդեօք, թէ սպանուած, փակցրին թէ չին յաջողեցան» :

Ունայնի ձայնը հեղձեալ մօտենում է .  
և իր ընդհատ ընդհատ կրկնումներից եւ  
հաստատ համարում եմ, թէ մերմութեան :

Ես էլ առաջ շարժուեցի դէպի ձայնը,  
և ո՞նտ մի խումբ ստուերներ, որմք մօ-  
տենում են դանդաղ քայլերով :

Մի ծառի հաստ բուն ինձ պատասպա-  
րեց իւր շուքի տակ, այնպէս որ խումբը  
իմ մօտիցս անցաւ՝ սուսնայ ինձ նկատելու :

Ես էլ հեաններն էր . . . խմբի մէջտեղ,  
երկար ու լայն պարեգօտը փուռում էր դե-  
պին, երևի արդեօք էր լինում նրա քայ-  
լերան, թևերը թէև կապուած էին, բայց  
դարձեալ հպարա եւ սիզանեմ քայլուածք  
ունէր : Դէմքը, աշտոս, չկարողայոյ տես-  
նել :

Զինւորները բոլոր արթնցել էին ար-  
դէն : Այլթունի թևերը արձակիկ տարուց  
յետոյ՝ սուսնձնացրի խմբից հեռու մի պու-  
րակում հսկողութեան տակ հանդատանալու :

Բարբա շուքնակի ծայրագուտիկ նըս-  
տեցինք կանաչի վրայ . նոր եկողների ու-  
րախ արամաղբութեան չափը չկար, ծի-  
ծաղով ու հահոցով պատմում էին, մէկը  
միւրի բերնից կարելով պատմութեան  
թևը . . .

Երեկոյեան կողմը, կար դեռ դաները  
բարբալին չէին կաշարակ, իրենք յանկարծ՝  
որպէս հիւրեր մտնում են քէօչկը . մէկը  
բարձրանում է խկոյն կանանցը, մինչ  
միւսները դաների վրայ պահապան կանդ-  
նում : Վեր բարձրացողը, Անարձն՝ գանում  
է Այլթունին, սարձնակով մա՛ սպառ-  
նում տեղնուտեղը կիճէ չհամաձայնի փոխ-  
չիլ իրեն հետ . համաձայնութիւնը աւանում  
և մինչ հաղիւ իրարանցում լնկնում է  
քէօչկի մէջ, կար իրենք դաների վրայի  
մի քանի պահապաններին պաշտօնաճաբ  
փուռում են դեափն, թաչում են դեռ եւս  
դաների վրայ պատրաստ կեցող ձիերի  
քամակը ու սրարչաւ հեռանում խաւարի  
մէջ դէպի անտառ :

—Այնտեղ վար իջանք ձիերից, և այժմ  
ահա քս սուաջն է այդ քածը...

Այսպէս վերջացրեց խօսքը Ահարօն:

\*  
\* \*

Դժուար էր հետաքրքրութիւնս դասել.  
ուղում էի անպատճառ տեսնել նրան, որ-  
քան կարելի էր շուտ, և զխաւորապէս  
դրա համար, առանց սպասելու միւս օր-  
ուան՝ առանձնացայ Այթուների հետ սր-  
բակում հարցաքննելու համար:

Խիստ ու հաստ ծառերը երկուքիս  
շուրջը, կոր ցանկապատ էին կազմել.  
կարծես մի շինարար ձեռք այդպէս էր  
հարգադրել. վերեւ, ճիւղերի միջից երե-  
ւում էր ստաղազարդ երկինքը, իսկ լու-  
սինը՝ մեզ լուսաւորում էր իւր աղօտ  
լոյսով:

Ես նստեցի մի փոսած ծառի կոճղի  
վրայ՝ դէմքս խոժոռած: Այդպէս էր իմ  
բնաւորութիւնը, առաջին բոպէին խո-  
բին լուսիւն էի պահում, որովհետեւ

փորձով դիտեմ, որ ոչ մի խօսք, ոչ մի ճառ,  
ոչ մի դայրոյթ, ոչ մի ազադակ չի ազդի  
և չի կարող ազդել այնպէս, ինչպէս խո-  
հրդաւոր, լուրջ լուսիւնը սորսափելի  
հայեացքով:

Իսկ նա կանգնել էր դիմացս մահա-  
պարտի ախրութեամբ, ձեռները կրծքին  
ծալած:

Այս անգամ իմ լուսիւնը ստորա-  
կանից աւելի տեսց, չդիտեմ ինչ դրաց-  
մունք, գուցէ նրա գեղեցկութեան համ-  
բաւը, սրգելք էր հանդիսանում նրա ե-  
րեսին համարձակ նայելու:

Մի թոյլ կին էր իմ առջ կանգնած,  
և նրա կեանքն ու մահը իմ մի խօսքից  
կոխուած. ևս զգում էի իմ ուժի առա-  
ւելութիւնը իր վրայ... բայց նրա գեղեց-  
կութիւնը...

Ամենատարտափելի սճեազորճուերն ան-  
գամ ինձ մաղաչափ երկիւղ չեն ազդել  
դէմ առ դէմ զայն՝ իմ կեանքի վերջա-  
նալու գիտակցութիւնը ինձ ոչինչ էր թը-

ւում ամէն անգամ, երբ մի անհատ տապալկաւի մէջ էի մանոււմ, բայց որտեղ հասնաւ հազ գեղեցիկութիւնը ինձ մի ինչ որ անորոշ սարսուռ էր ազդուած . . .

Մասնում էի, — սրբազան սկիւմ հարցաւորը, երբ նա կախ դրած գլուխը վեր բարձրացրեց և շնչատակի երևալու նայեց: Զգալի նրա ուժը ու իմ հայեացքն էլ ու լղուեցաւ դէպի նա:

Լուսնի լոյսը տասնոց մի տասերեք քաղցիկ էր նրա ամբողջ հասակը — մի չինարի ծառ ճոխ տերևներով, ճուտակ գլխաքը, սև ու մեծ աչքերով, արծաթի քիչ կոր քիթով ու բարակ յնքերով փառապատկն էր կողմում այդ չինարի նրբութեան ու փարթամութեան, մամուլէն ճակատի հրազարտիչ շարժանակի սրտաւած էր արծաթ ու սակի դրամների շարքով և մի թափանցիկ շղարշ միայն ծածկում էր սկանձի սակիները, և առտա թխադոջն մտղերը:

Նա չէր խօսում, բայց սուր աչքերը

ուղիղ վրաս էր յառել, առաջին անգամն էր կեանքիս մէջ, որ սարկի հայեացքն ու լուսնիւնը ազդում էր ինձ վրայ:

— Գու մասնի՞չ ես — խոսեցի ես լուսնիւնը, վերջապէս:

Ո՛չ, — պատասխանեց նա վճռական շեշտով:

— Ինչո՞ւ փախար Մհօր հետ:

— Սիրում էի նրան, պատասխանեց նա նոյն վճռական ամուտով:

Նւ նրա այդ խորիստ պատասխանները աւելի էին գեղեցիկացնում նրան. ծնօտը գրեթէ ուղիղ միանում էր կողորդին, երբ պատասխանները տալիս՝ գլուխը հարստութեամբ ևս էր աւանում. իսկ բերանը այնքան փոքր էր, որ կարծես մի կարմիր նեղ ժապուէնի կտոր էր ծնօտին փակցուած:

— Գու ճի՞շտ պատասխանիր իմ բոլոր հարցումներին, խոստովանիր բոլորը, բոլորը, ինչ որ արել ես, ինչ որ խօսել ես: Գու լսօ լաւ ծանօթ ես յեղափոխական դատաստանին, ոչ մի կեղծիք չի ազատուի նրա

ձեռքից:

— Բոլորը կասեմ, բոլորը. պարո՞ն Աեւոն, ոչ մի բան չեմ պահի:

— Դու ի՞նչ մասնութիւն ես արել:

— Ես մասնութիւն չեմ արել:

— Սո՛ւա ես խօսում.— դայրացայ ես — դու զիտես որ բաւական է մի խո՛ւք, և քու կաշին ողջ ողջ կը քերթեն. դու իսո՞ճանաչու՞մ ես ինձ, լսե՛լ ես իմ անունը:

Ծունկի իջաւ Այլթուներ, զեանաքարչ մօտեցաւ ինձ: Նրա զեղին պարեգօար փռուեց էր զեալին ընդարձակ ստարածութեամբ, գլուխը բարձր երկու ձեւները իրար կցած, կարտալի վիզը դէպի ինձ երկարելով, սե աչքերը ակնապիչ՝ ուղիղ երեսիս ձգած՝ կարծես երգում էր.

— Ես մասնիչ չե՛մ, պարո՞ն, ճիշտ է, ես փախել եմ քիւրա Մօֆ հետ, որովհետեւ նրան սիրում էի զեւ մանկութիւնից: Երբ նա կատողի ձին տակին, հրացանն ուսին՝ մեր զխզովն անցնում էր, ես ըստանչանում էի նրա վրայ. և երբ մեծա-

ցայ, մեր շարարերութիւնները աւելի սերտացան, և որովհետեւ իմ մարդուն չէի սիրում, փախայ նրա հետ: Ես մասնիչ չե՛մ, պարո՞ն, ես սիրում էի. . . :

Նա խօսում էր աղաչական ձայնով և աշխատում էր ելթէ ոչ համոզել, դէթ աղաղակ վրաս:

— Մի տախ, եթէ դու մասնիչ չես, ապա ո՞վ բանել սուտ. ձեր գիւղի գինււոր Սա՛նակին. . . — Ապա թուեցի մի քանի անուններ, որոնք բոլորը կնդաղբում էին թէ սրա մասնութեան հետեւանքով են բանուել. — Մօն սրտեղից խնայու, որ նրանք չեղափոխական են:

Այլթուներ աւելի մօտեցաւ ինձ չաքէչօք: Այլթմ նրա դէմքը ուղիղ առաջ՝ երեսիս էր նայում:

— Այդ ճիշտ է, պարոն, — անթիջտակս պատասխանեց նա, երբ ձայն կարեցի, — և Մօֆն ատել եմ մի քանի անուններ, բայց ես չեմ մասնել. ճ, դու երկատասարդ ես, պարո՞ն, — այս ատելով ձեւները

զբաւ ճնկներէս, ես մի թեթև սարսուռ  
 զգացի, — գիտե՞ս թէ ինչ է նշանակում  
 սէր, դու սիրե՞լ ես երբ և իցէ: — Ես զար-  
 մացել էի նրա այդ աստիճանի համարձա-  
 կաւթեան վրայ, բայց և այնպէս լսում  
 էի, — դա խենդացնում է մարդուն, խեն-  
 թացնում, — և արցունքի կաթիլները վայ-  
 րելին նրա մամուկէն այտերի վրայ, աչքե-  
 րը լեցուեցաւ զուլայ հեղուկով, որը աւե-  
 լի գրտիչ դարձուց նրա հայեացքը:

— Ես սիրում էի նրան խենթի պէս, —  
 շարունակեց նա, վաքը ընդմիջումից յե-  
 ստոյ, — այսպէս խոր զիշերներին երբ միա-  
 սին քէօչկում նստած խօսում էինք որպէս  
 մտերիմներ, սրպէս բարեկամներ, որպէս  
 սիրահարներ. և այդ բոլորներէն բաց եմ  
 թողել իմ բերնից մի քանի անուններ,  
 բայց ևս մտանիչ չեմ, պարս՛ն, ևս սիրում  
 էի:

Նա ուղիղ կրեսիս էր նայում կրակոս  
 հայեացքով: Որքան դիտում էի նրա նուրբ  
 զիմազիծը մօտիկից, այնքան աւելի զե-

զեցկանում էր և իրօք նա մի հրաշալիք  
 էր: Լեռնային վայրի բնութիւնը օժակ էր  
 նրան ամեն սեռակի ճոխութեամբ, ինչ որ  
 ժողովուրդը պատմում էր նրա մասին,  
 դեռ պակաս էր. և ինչո՞ւ զարմանալ, որ  
 այդ չքնաղ արտաքինի տակ թաղնուած  
 լինէր մի սիրտ՝ անձուն սիրոյ հրդեհով  
 վառուած . . . :

— Լա՛ւ, ուրիշ ինչ մտանութիւններ  
 ևս արե՛լ, — շարունակեցի ևս հարցաքննու-  
 թիւնը:

— Դու միշտ նոյնը կասես, պարս՛ն, ևս  
 մտանիչ չեմ, ևս սիրող եմ, սիրո՞ւղ, կը  
 հասկնաս ինչ կը նշանակէ սիրել, — և աչ-  
 քերէս միջից ուզում էր պատասխանը ըս-  
 տանալ. — կը սիրեմ կարիճին, քաջին — և  
 նա այս խօսքերը արտասանում էր այն-  
 պիսի վայրենի, բայց խոր արտայայտու-  
 թեամբ, որ անկարելի էր չի գրաւուել:

Նա չբաւականացաւ միայն զիմացս  
 նստելով, ձեռները, որ մինչև այդ ժա-  
 մանակ ծուռկիս վրայ էր, վեր բարցրա-

ցրեց և քնքուշ շոյումով փաթթուեցաւ վզիս . . .

Արիւնը գլխիս խոնց, նրա շունչը զգում էի ճակատիս վրայ, կրծքի տրտղ բարբառումը զգում էի ճշդութեամբ: Նա ուզիլ աչքերին նայեց և ամենայն համարձակութեամբ ճակատս համբուրեց.

— Դու էլ ես կարիճ, այժմ քեզ եմ սիրում . . .

Նրա տաք համբոյրը աւելի զինովցրեց ինձի. առաջին րազէին ես էլ թուրացայ, ուզում էի կարծես անձնատուր լինել նըրան: Ի՞նչ մէջն էլ զարթեց երկար ժամանակ գոցուած կիրքը մի կատաղի թափով, քիչ մնաց իմ շրթունքներն էլ նրա արցունքատ աչքերին փակչէին, երբ չգիտեմ ի՞նչ ուժ, յիշեցրեց ինձ իմ ուլ լինելը: Մի անախորժ կսկիճ զգացի, բայց ուժեղ ժեստով հեռու մղեցի նրան գրկիցս:

Այլթունը չէր ուզում բաժանուել վզիցըս, որ ամուր գշկել էր . . . ևս աւելի կատաղեցի, սպառակների մի քանի ուժեղ

հարուածներ իջեցրի նրա երեսին, վեր թըռայ կանգնեցի, ու յուզուած՝ շուրջս նայեցի, ոչ ոք չկար. իսկ Այլթունը ընկել էր գետին՝ երեսը ծածկած երկու ձեռների մէջ:

Նրան զինուորների պահպանութեան յանձնեցի, իսկ ես առանձնացայ բարբոթ վին:

Յաջորդ օրն էլ մենք անտառն անցուցինք, միայն քաշուեցանք աւելի ներսերը:

Քարքէ լեռան ընդարձակ փեշերը երկար սարածութեամբ ծածկուած են անտառների խիտ ցանցով. նրա մուխ ու ստուերախիտ խորքերը միայն վայրի գազաններին է ծանօթ: Վայրենի բուսականութիւնը իր ամբողջ ճոխութեամբ սճում է այդ սարալանջերի վրայ ազատ հողմերի, հեղեղի պէս թափուող անձրևների տակ:

Յեզատիտական խճրակները երբ այլևս անկարելիութիւն են ունենում զիւղեբում կամ դաշտում ապաստանելու, այս

մութ ծմակներն են ընտրում իրրև ապահով վայր, ուր ոչ կառավարութեան թընթանօթները կարող են հասնել, և ոչ էլ խուժանի սպառախօր . . . :

Այս անմարմնացի ծմակները ամբողջ շրջակայքի ժողովրդեան վրայ ինչ որ խորհրդաւոր ստրատի են ստարածել և ոչ ոք կը համարձակի մուտ գործել այդ բնական վայրենութեան գիրիչ :

Այթունի փոխուտախ լուրը միւս օրը կայծակի արագութեամբ ստարածուեցաւ ողջ շրջանը : Բոլորը նրա մատին էին խօսում, քիւրան էլ, հայն էլ, այդպէս էին պատմում եկող սուրճանդակները :

Քիւրտերը ընդհանրապէս զայրացել էին և իրենց համար անպատուութիւն էին համարում յեղափոխականների այդ քայլը . իսկ հայերը բոլորը ուրախացած, սպասում էին աւելի ուրախալիկին, — Այթունի մահուան յայտարարութեանը :

Եւ առասպելներ էին շրջում բերնէ բերան, նկարագրում էին մանրամասն թէ

ինչպէս պիտի սարմնեն Այթունին, կաշին քերթեն և շների առաջ ձգեն նրա մարմինը . թէ պէտք է կարեն նրա լեզուն, որ համարձակուել էր մասնութիւն անել . կրակախօսութեամբ է այրելին այն շրթունքները, որ քիւրտ աղային համարյոք էր սուել, և այդ բոլոր անողը՝ պիտի լինէի նա :

Իսկ շատերը արդէն խօսում էին այդ աշխարհի մասին իրրև կատարուած իրողութիւնների :

Սարախիւլի է ժողովրդական դատաստանը, նա չի ճանաչում ոչ մի մեղմացուցիչ հանդամանք, երբ իր վարերով նուիրագործուած պատիւի հասկացողութիւնն է արատաւորած, երբ մանաւանդ պատժուողը ինքը չէ, այլ մի անհատ, իր միջկց, այդ զէպքում նա այլևս օտար է նրան խաչ պէտք է հանել, որպէս զի հաւարակական խիղճը հանգստանայ :

Սակայն ևս ինչ էի մտածում. հասարակական կարծիքը անպայման ահապին նշանակութիւն ունէր իմ գործկակերպի

վրայ, ևս մասամբ դէժ՝ պէտք է բաւարարեալ թիւն տայի հասարակական պահանջին, եթէ ոչ, նոյն դատարարութիւնը, նոյն վճիռը կարձակուէր իմ դէմ: Այդպէս է միշտ ժողովուրդներու ետականութիւնը:

Այժմեր, ի հարկէ, որք չտիտ յանցանք ունէր, բայց մ'չ ունէր, որքան երկուակայում էր ժողովուրդը: Նա սիրել էր քիւրախն, — իմ տեսակետով մի շատ բընական բան, բայց դա նոյնիսկ ոճիր էր ամբողջ ժողովրդի հասկացողութեամբ:

Փորում էի ուղեզս մեղմացուցիչ հանդամանքներ գտնելու նպատակով, որպէսզի կարողանամ Այժմունքն դէժ մանուանից աղտակ. նրա հրաշալի մարմինը անշունչ մի դիակ չդառնայ...

Ձայրոյթի բողբոջն թէև շատ բիրտ կերպով վարուեցի նրա հետ, բայց յետոյ զզջացի արածիս վրայ: Նա մտածում էի նրա մասին լուրջ կերպով, բայց ոչ ոքի ոչինչ էի ցոյց տալիս...

Նրա գեղեցկութիւնը իմ հոգին էր

Թափանցելի՝ և այս վայրի լեւներում, վայրի անտաններում, ուր բնութեան ուժեղ զարկն է զգացւում երկրազնափ երակնութի մէջ, ուր աւելի որջ կերպով ևս զգում, որ ասպրում է, կեանքն է ասպրում ամբողջ օրէնքերքը իւր արեւներով, մարգակներով օտ աստղերով, ինչո՞ւ, ևս քար պիտի կրաքէի ժողովրդական գառտասանի համար, երբ այնանդ, իմ քով մի հիւրի կար, որի պիտար ինձ համար կարող էր բարախել հէնց այն բողբոջ, երբ ևս ցանկայի:

\* \*

Կէսօրուայ օթի դէմ գովանում էինք կանաչ խոտերի միջով զլլան վաղաղ արբիւրների ջրերով, որոնք խոտերի առկ պահուրտած՝ միշտ դնում էին ու զընում...

Այսօր մեր հայը շատ ուշ բերին, անասում շատ էին փնտակ և մեզ հաղիւ էին գտել: Գլխի չոր հայ էր մեր ուտակքը, ջրի մէջ էինք դնում և երկար պահում, մինչև կակղէր, և յետոյ միայն կա-

բողանում էինք ուսակ, ստանց դրանք  
ստամ չէր կարի:

Չմուսացայ մի հայ էլ ճրան ուղար-  
կելու, մի տեսակ հողածուխին ունեի զէ-  
պի նա, ուղարկեցի ու մտառկայ լեռնից  
նրա համար ձիւն բերել սուե. բայց հար-  
կաւ ոչը բոլորը կարգադրում էի այնպէս,  
որ ոչ ոք ոչինչ զգար, չկատկամէր աւե-  
գամ...

Երեկոյեան կողմ ուղեցի հարցաքննու-  
թիւնս շարունակել դարձեալ, եւ կանչեցի  
երկու պահապաններին, որոնք Այթուհի -  
կեցած ծմակի մտանքն էին տեղաւորուած -  
եւ մտեցայ:

Արևի վերջին ճառագայթները ծաւերի  
բունների արանքներից ներս էին թափան-  
ցել. ստուերները երկարել էին, և շողքերը  
աւելի տարածուել: Անտառի ներսը աւելի  
էր լուսաւորուել, որովհետեւ բարձրակա-  
տար ծաւերի տերևախիտ սաղարթները  
այլեւս չէին միմայնում կանաչազարդ գե-  
տինը:

Կամացուկ մտեցայ պուրակին, ճիւ-  
շերի միջով հեռուից նկատեցի Այթուհին,  
նոտած էր մամուսալատ ժայռի վրայ, որի  
տառջից անցնում էր փոքրիկ ստուակը,  
կրնայ խտտերի երեսը լիզելով: Ոտները՝  
մինչև սրունքները մերկ՝ ջրի մէջ ցլա-  
նում էին սրպէս երկու մարմարեայ ար-  
ձանիկներ, զեղին պարեգօտի փեշերը ծած-  
կել էին անխոյժ կերպով ժայռի մի մա-  
շը. կարծքի կոճակները սրձակուած էին.  
չլամնայու նպասակով, գլուխը բոլորովին  
քացել էր, մազերը թափուել էին ուսին  
քիւրցան, բազուկները բարձրանում իջ-  
նում էին, և ձեռների երկար մտաները ի-  
ջար հաւաքած՝ կանաչի վրայից ծուռ  
ջուր էր առնում ախով և մազերի վրայ  
ցանում, երևան էր ցօղում:

Մարմարեայ ճակատի ու մազերի վրայ  
ջրի կաթիլները շողին էին աղիւս արևի  
վերջին ճառագայթների տակ, սրպէս վա-  
ճորդայն ցօղի կաթիլները նորաբայ շու-  
շանի թերթիկների վրայ, նման մի արձանի

իր ամբողջութեան մէջ սղոյուել էր աբելի վերջին սակի ճառագայթներով, և եբբէ երկչոտ, բայց հարստ հայեացքը հետաշուտ էր ջրի վրայից և շարժը նայում, նա նման էր լեռան կրասարի վայրի եղնիկին: Եւ ոչինչ չը նշմարեալ գարծեալ իր գործնէ էր շարունակում: . . .

Երկար տանն մոցստի տակ թաղանթուած՝ գիտում էի նրան, նաև այն չար հաջորդութեամբ էր նրա կողքին, ժայռի վրայ: Չէի համարձակում մտնելու և խանդաբեց նրա վայելքը բնութեան, չէի ազում խուսկ սպիտակի մի սրբաձի հետ մտնուած թեան մտին: Եւ իմ քայլերը ստաջ ջէին գնում, և ոչ էլ յետ իմ թաղանթից: Այդ պէս երկար, շատ երկար ուղւում էի մնալ:

Արեգակի վերջին շողերը աւելի առաւելի աղօտացան, ծառերի ճիւղերին թաշնիկները սկսեցին իրենց դողալով ինկնելը ճառագայթ, կարծես վերջին աղօթքը մեռնող բնութեան:

Այժմունն էլ մի բողբ կանգ առաւ:

փոքրիկ գլուխը վեր բարձրացրեց, ձեռները վանամաձև դրաւ ճակատին, թոչնիկներին նայեց հիացած դէմքով ու ապա ինքն էլ սկսեց մնալ, հագլու լսելի ճայնով ժողովրդական սիրային երգը, կարծես թաշաններէ վերջին աղօթքին մասնակցած լինելու համար: . . .

Ես գիտում էի իմ թաղանթից այս չքնաղ համերգը բնութեան, մինչև երկար տուերները աղօտացան, ապամուկցան և ապա իրենց խառաբը մեծաբնի ու ախրապետեցին վերջույն ի մտնող շողերին: . . .

Եւ երբ ամէն ինչ կորաւ գիշերային խառաբի մէջ, ևս գարծեալ շամարձակեցի ստաջ գնալ, այլ յետ գնալի գլուխ քայլերով, յաջորդ օրուայ համար կարգալրութիւններ անելու:

\*  
\* \*

Այժմունը այլևս սրտիս մի անկունը դրուել էր, և ևս ուղէի, շուղէի՝ նրա մասին պիտի մտածէի: Արդէն սրտեր էի անելիքս: Գիւղը իջնելուց և սրտապար-

ուրուց յետոյ՝ կանչեցի Ալթունի տմու-  
նին, Արտաշին և առանց նախաբանի ա-  
ռաջարկեցի.

— Դու պէտք է դարձեալ ապրիս քո  
կնաջ հետ.

Ի՞նչ. — Հնամկցաւ կամ չուղեց հաս-  
կընայ Արտաշը առջի անգամից:

— Դու պէտք է դարձեալ ապրիս կը-  
նաջդ հետ. — պատասխանեցի ևս, շեշտելով  
ամէն մէկ բառի վրայ:

— Ի՞նչ, — դարձեալ հարց տուաւ նա.  
— Ալթունի՞ հետ:

— Այո՛, — վրայ բերի ևս անմիջապէս,  
ու զճոտկան:

— Բայց չէ՞ որ նա մասնիչ է, — դար-  
նայած ու տալած՝ աչքերը վրաս չսեց  
խեղճը:

— Դատարկ բաներ են, ևս քննեցի, ըս-  
տաւորեցի, տեսայ, որ սուս է եղել բս-  
չորը:

— Ի՞նչ կրտես պարո՛ն, նա քեզ կը խա-  
բէ, եթէ նա մասնիչ չէ, հարս ո՞վ բըս-

նել սուեց մեր ընկեր Մհակին — ու  
թուեց մի քանի անուններ իրար ետեկից:

— Ուրիշներն են մասնիչ, նա չէ՛, ևս  
ստուգեցի. — վրայ բերի անսխալ կերպով:

— Հապա որ նա քիւրդի ծոցն է պատ-  
կել. — ամիջապէս օգնութեան կանչեց մի  
ուրիշ փոստ, երբ առաջինով հնամեղեց:

— Այդ է՛լ ոչինչ, սխալուեր է, պէտք  
է ներկայորոհ, նա զվճում է այժմ:

— Ի՞նչ, պարոն Լեւոն, — այժմ արդէն  
գայրացաւ. նա, — այդ ի՞նչ խօսքեր են,  
պտանիկը զվճո՞յ. մասնիչը զվճո՞յ: Այդ  
քո գործը չէ՛, պարո՛ն, — մինչև ու այդ օր  
խոնարհ գառնուկի նման զինուորը ըմբոս-  
տացաւ ու ստրի կանգնեց աչքերը ուղիւ  
վրաս յառեկով. — այդ քո գործը չէ՛ ար-  
դէն պարո՛ն, — կրկնեց նա կանողնած տե-  
ղից. —

— Ես նամուսի համար եմ այս զէնքը  
վրաս կապել, — նա ձեռները տարաւ փամ-  
փուշտակալը, — լեւոններն ու չոլերը ման կու-  
գամ այսքան տարիներ, ու քանի կեն-

գանի ևս, չեմ մարտեր, որ իմ կինը, իմ հարազատ կինը մի շան հետ, — նա աստաները կրճակեց, աչքերը լեցուցեցան արխունով, — ոչ թէ ամիսներով, այլ մի րոպե էլ սպրի, մի շան հետ շամառայ: — Կերջին րատը նա այնպէս աւճիկն արատանեց, որ կատաղութիւնից քիչ էր մնացել հեկեկօր, բայց զսոցեց իրեն ու չարանակեց, —

— Եւ չեմ մարտի որ իմ սնից մասնիչ գուրս գայ, այս՛, նա մի մասնիչ է, և այժմ ապրիմ նրա հետ, այդ քաւ գործը չէ՛, պահան: Եւ այս ձեռներով կը խեղդեմ նրա կոկորդը, — ասաց ու գուրս թըսու անից:

Մնացի մինակ: Չախազանց վատ դըրութեան մէջ էի: Թւում էր թէ իրօք նա արժանի է մահուան պատժի, բայց եւ թուրացած նրա գեղեցիկութիւնից, ուզում էի պաշտպանել նշան՝ իմ սննատական տեսակէտից. սակայն հասարակականը, որի հետ և նրա իրական տէրը՝ բոլորովին

ուրիշ տեսակ են մտածում:

Փարձեցի զիւրի քահանայի միջոցով համազկ ամուսնին, որ գարձակ իր կինը ընդունի Ալիսանին, բայց անհար է դաւ, բողբ սկսեց ամբողջ ընտանիքի կողմից: Ամբողջ զիւզը, ամբողջ չըջակայ համայնքը խուլ կերպով սկսեց արանջալ:

Մի շարաթ պահեցի նրան. այդ ամբողջ մամանակը զանազան զգացումներ էին տիրում իմ մէջ, թէ և ուզում էի յանձնել ամուսնուս, բայց տխրատում էի, նախանձի մի զգացում, որպէս թունաւոր օձ, կրծում էր հողիս, եթէ նոյնիսկ տմուսինն էլ համաձայնէր պահել, գարձակը նա իմն չի լինի, իսկ եւ հագուս խորքից ցունկանում էի որ անպատճառ իմն լինի...

Եթէ լսէի հասարակութեան կամ նրա ընտանիքին, պիտի յայտարարէի որ նա մեղաւոր է, և ենթարկէի մահուան, բայց մի՞թէ կարելի է այդպիսի չքնազ կէանքի թելը կարել, նրանից արիւն հանել...

Եթէ վերցնէի ու յայտարարէի բոլոր-

բին, թէ նա իմն է, ոչ ոք իրաւունք չունի խօսելու նրա մասին, — նշանակում էր խաչը դնել իմ գոյութեան վրայ, և այնքան տարուայ տաժանակիր աշխատութեամբ, կեանքի գնով վատակամ անունը, ձեռք բերած ժողովրդակամութիւնը ջուր դցել: Ես ծախուած պիտի լինէի մի կնոջ, որը պատնիկ է, մի կնոջ, որը մասնիչ է...

Ես ուզում էի յետ վտանկ իմ միջից բոլոր մասձումները և պահել միայն նրան ազատելու դադարտարը, — բայց զբանով էլ պիտի գնայի ամբողջ հասարակութեան գէմ...

Մինչ աշխատում էի մտքեր պատրաստել, վերջին օրը Արտաչը ինձ ներկայացաւ գիւղի քահանայի հետ.

— Պարան Լեւոն, նա, նա — առանց աւունք ապրու կրկնեց միայն «նա» երկու անգամ — իմ կինն է, հետևադար ինձ կը պատկանի, եթէ ինձ կը պատկանի, ուրեմն սուր ինձի:

Նա խօսում էր հանդիստ, բայց պա-

հանջկատ ու վճռական ձեւով:

— Տամ քեզի, բայց ինչ պիտի անես, — հարցրի ևս այդ պահանջից յանկարծակիս կեամ:

— Նա իմ կինն չէ՞, այդ ե՛ս գիտեմ:

— Շատ լաւ, — որպէս թէ ուրախացայ ևս, — Բայց սե՛ս, ասում եմ քեզ տեր-հօր ներկայութեան, եթէ դու նրա մի մազին դիպար, եթէ նրան մի վնաս պատճառեցիր, քո աչքերը կը հանեմ...

— Չէ՛, չէ՛, ո՛րդի, — վրայ բերաւ տէր-տէրը, որ մի բարի ձերբակ էր, — ինչ պիտի անէ, ջանէլ էր, սխալուեցաւ, քրիստոնէ էլ կը պատուիրէ ներել:

— Եթէ ևս նրա արիւնը խմեմ. — կորեց խեղճ քահանայի խօսքը Արտաչ. — Այն ժամանակ իմ արիւնն էլ թող քեզ հալալ լինի...:

Ես զգացի, որ նա ինչ որ մի թաքուն նպատակ ունէր:

\*\*

\*\*

Երեկոյ ևր արդէն. արտօնեցի Արտա-

չին, որ ասնէ իր կինը և ասնէ որոշուած գիւղը, իր ազգակիցներէց մէկի մօտ: Մութն ընկնելիս երկուքը միասին, Արտաշը և իր կինը, ճանապարհ խնկան:

Բոլորը՝ սրանք խնացան, դժգոհ մընացին այդ կարգադրութիւնից և կարծում էին թէ ամեն ինչ դրանով էլ վերջացաւ:

Նրանց հեռանալուց յետոյ մանուսնող՝ կտակածը ուժեղացաւ մէջս, — մի վատ նախազգացում ունեցայ: Թէև կինը յանձնեցի ամուսնուն, բայց բնաւ չէի հաւատում, որ նա ողջ կը թողնի կնոջը, այնքան էր վրէժով լեցուած նա... Ես հաւատացած էի, որ նա նոյնիսկ ճանապարհին անպատճառ մի դէպք կը հանի, մի ոճիր կը գործի, ու իր վրէժը կտանէ զիշերային խուարի ու միայնութեան մէջ:

Հաւատացած այդ բանին՝ մէջս մի անզուսպ հետաքրքրութիւն արթնցաւ՝ անպատճառ տեսնել այդ դեղեցիկ արաբածին՝ շունչը փչելու վերջին րոպէին:

Ամբողջ խումբը ճանապարհ ձգեցի ու-

րիչ գիւղ, իսկ ես, հետս առի մի զինուոր միայն և գնացի այն ճանապարհով, որով զոյգը պիտի գնար:

Սարսափելի մութ գիշեր էր, մատը խոթէի մարդու աչքը, չէր տեսնի: Բայց բոլոր ճանապարհներն էլ մեզ ծանօթ էին, գիտէինք թէ ամէն մի քար ու բէր ուժը: Եթէ ցերեկը լինէր, դուրսէ չկարողանայինք այդպէս գնալ, ինչպէս գիշերը, սովորութիւնը ամէն ինչ զիւրացնում է...

Նրբման միայն, երբ նեղ կածանը կորչում էր կանաչ հարթավայրի վրայ, կանգ էինք առնում, իմ զինուորը ես ու առաջ էր գնում, ձեռներով չօշափում էր զետին... և դարձեալ շարունակում էինք ճանապարհը:

Նրկուքս էլ լուս էինք, ես անդադար քայլերս արագացնում էի, որպէս զի նախքան սե է գործողութիւն կոտարելը՝ արդեւ լինեմ, իսկ եթէ արդէն անպատճառ պիտի կատարուի կամ կատարուելու վրայ է, ուզում էի մի զիւային հրճուանքով

ակամատես լիմկ նրա մահուան :

Երևակայութիւնս վառու՞մ էր զիշե-  
րային խաւարի մէջ, ուր ոչինչ չէր երե-  
ւում, բայց աստղերից . իսկ ես, իմ ա-  
ռաջ տեսնում էի Այթուհին մերթ վզիս  
փաթաթուած զիրքով, ինչպէս քննութեան  
ժամանակն էր. մերթ մամուտազատ ժայռի  
վրայ նստած մերկ սրունքներով, Եւ այդ  
վերջիշումների ժամանակ մի անուշ զգաց-  
մանք անցնում էր սրտիս վրայից . դրա  
հետ միտսին զգում էի մի ներքին կակիծ .  
չը լինի թէ նա մնունի . . . կակ եթէ կեն-  
դանի էլ մնար . իմս չէր . . .

Ուրի ձայներ լսեցի : Մեզնից քիչ  
առաջ քայտղներ կային : Սկսեցինք մեր  
քայլերը աւելի զգոյշ փոխել .— անպատ-  
ճառ նրանք կը լինէին . . . :

Ուզում էի լսել նրանց խօսակցութիւ-  
նը և դրա համար էլ չափազանց զգոյշ,  
առանց զգալ սալու, գրեթէ քովերից  
գնում էինք : Ականջներս լարած ուզում  
եմ գոնէ մի բառ, մի փախուէկ լսել : Ոչ

մի խօսք, ոչ մի ձայն : Դանդաղ քայլերով  
առաջ են շարժուում . . . :

Յոյսս կարած մի բան լսելուց՝ առաջ  
անցայ և հարցրի :

— Ինչո՞ւ էք այսքան կամոց քալում .—

Նրանք նախ դարձայան, ոչ ոք ոչինչ  
չխօսեց : Քիչ լսելուց յետոյ միայն Արտաշ  
պատասխանեց :

— Մի քիչ էլ ժամանակ կուտամ այս  
շան քածին շունչ ստնկու :

Այթուհը զգաց թէ նա ի՞նչ էր ուզում  
ասել, ճշտց սուր ձայնով ու սաներուս  
վրայ ընկու :

— Պարո՞ն, պարո՞ն, քո ոտն եմ ին-  
կեր, ազատի՞ր ինձ սրա ձեռից, — աղա-  
չակիան ձայնով դոչեց նա, և սկսաւ ար-  
տասուել .

Ես էլ կարծես զգացուած՝ թէ և դի-  
տէի, որ այդպէս էլ պիտի լինէր, յանդի-  
մանական շեշտով մատս Արտաշի վրայ  
թափանարեցի խաւարի մէջ :

— Չհամարձակուիս սրան ձեռք տալ,

ապա թէ ո՛չ...

— Դու գործ չունիս, պարտն, դա իմն է, իմ նամուսն է, դրա ասուած վերքը իմ սրտին է հասել, ևս զիտեմ ինչպէս պիտի վարուիմ դրա հետ, դու մի՛ խառնուիր:

— Առաջ անցիր, — պատուիրեցի նրան ևս Ալթունին իմ պաշտպանութեան ասկն ասուած գնում էինք:

Խուարը սարսափելի էր, Ալթունը գժուարութեամբ էր կարողանում քայլել, լուսթիւնը ճնշում էր մեզ բարբիս էլ, միայն Ալթունի երբեմնակի խոր հառաչանքն էր լսում...

— Ի հարկէ, նա քեզ չի անպատուել, նա քեզ չի խայտառակել. քո կինը չէ, որ քիւրաի հետ է չնացել. քո կինը չէ, որ ամբողջ ազգի մէջ մտանիչ է դարձել, դա ի՛մն է, ի՛մն, իմ նամուսն է... զժգո՛հ մրմնջում էր ամուսինը, ասանց համարձակելու աւելի խիստ խօսել:

Լուսնի եզջիւրը դուրս սողոց մտառկայ լուսներու կասարից, և նրա սուաջին

չողերի ասակ փայլեց Մուրաս գետը, որ օձապառլոս սրբուած էր քնդարձակ դաշտի միջով: Մօտենում էինք Մուրասին:

Պէտք էր շտապել, որովհետև լուսնի լոյսը վասնգուտը էր, մանաւանդ որ լուսանալու մտա էր:

Քաջերնիս արագացրինք. Ալթունն էլ ժողովեց իր փեշերը, որպէսզի աւելի շուտ կարենայ քայլել: Արդէն Մուրասի ատին էինք հասել, նստանք կանաչի վրայ փոքր ինչ չունչ տանկու և ապա շարունակելու ճանապարհը: Ամուսինը դարձեալ մի անգամ խղեց լուսթիւնը.

— Դուք գնացէ՛ք, պարտն Լեւոն, մենք յետոյ կուգանք:

Ալթունը մօտեցաւ, ուղեց նորէն ոտներին փաթառելի: Լուսնի լոյսի ասի նրա գէժքը սարսափ էր դարձել. չգիտեմ ի՛նչ զգացմունքով դէն հրեցի կողաութեամբ: Նա վայր ընկաւ:

— Պարտն, դու նրան: ի՛նձ ևս յանձնել...

—Քե՛ղ լինի, հո՛ւ, տասցի՛ ես յան-  
կէջը՝ ծակի ու թիկն առի խտտերի վրայ:

Սարտախելի բազէ էր...

Ես մինչև այժմ էլ չզիտան ինչ զգա-  
ցումից զբզումած ուզեցի յանկարծ մի ոճիր  
տեսնել, զիտել կարմիր արխարն այն կնոջ,  
որին սիրում եմ, բայց որը խմն չէ, և խմ  
լինել չի կարող...

Ամուսինն էլ յանկարծակիի եկաւ այդ  
խօսքից, նա շտկուեցաւ ու աչքերը փայ-  
լատակեցին.

— Ինչպէ՞ս... Ի՛նձ լինի... Ինչ ու-  
զե՞մ...

Այլթու՛նը չհասկցաւ թէ՛ ևս ինչ տասցի,  
չև քիչ հանդիսա էր:

Իսկ երբ ամուսինը դաշտնը մերկա-  
ցըրած, որ Վայցում էր լուսնի տակ, կա-  
տաղած դէմքով ու դանդաղ քայլերով նը-  
րան մօտեցաւ, Այլթու՛նը մի սարտախելի  
ճիչ արծակեց և մի տատաճով իմ գիրկը  
թռաւ, բայց ևս այս անգամ աւելի ուժեղ  
հարուածով դէն հրեցի:

— Ինձ մի՛ սպանէ՛ք, — սկսեց նա աղիտ-  
զարմ լաց ու աղաչանքը, որից քարերն  
իսկ կ'արտասուէին, բայց ևս այդ բազէին  
քարից էլ քար էի...

Արևան պատկերը, լուսնի լոյսի տակ,  
ինձ գինալցրել էր, իսկ գետի ուժեղ հո-  
սանքը, ալիքների վշտոյը իմ մէջ կտտա-  
զութիւն էր ծնել...

— Դ՛, շո՛ւտ, — գտաայլի ևս,

Այլթու՛նը, որպէս մի սրբուհի, ամուս-  
նու տառջ չուքած՝ աղաչում էր, սրտա-  
տուճ: Բառերը կարկուտի պէս իրար ե-  
տեւից գալիս էին և արցունքը առատ ա-  
զոզել էր նրա մամուլէն այսերը: Այդ դէ-  
քով նա խկապէս չքնաչ էր:

Ամուսինը՝ իմ խիստ սասաի վրայ՝ ու-  
զեց շողացող սուրը նրա կրծքին մօտեցը-  
նել՝ երբ լուեց Այլթու՛նի մեղմ ու արտասու-  
ուալից ձայնը.

— Յիշի՛ր, Սրտաշ, յիշի՛ր վանքի պա-  
տի տակը, մեր ուխտը, մեր համբոյրը, քո  
համբոյրը, քո սէրը... քո սէրը... — և

առտուածային հեկեկանքով սաներին փարուեցաւ — մեր սէ՛րը . . .

Արտաշի աչքերի մէջն էլ ևս արցունք նկատեցի, նա մի կտրւմ նեակեց դաշոյնը և հեկեկալով փախաւ դէպի հեռուն . . .

Իմ հետ եղած գինւորն էլ արդէն չգի՜մանալով անտարանին՝ հեռացել էր . . .

Մնացինք ևս և նա, միայնակ լուսնի լոյսի տակ :

Այլմուռը սարսափահար, կարծես և՛ բազի մէջ, իր շուրջը նայեց : Մինակ ևս էի այն տեղ . կարծեց թէ դարձեալ ևս ազատեցի իրեն և երախտադիտական զգացումով զիրկըս ինկաւ :

Արիւնը գլուխս խփեց : Նրա արցունքս աչտերը ինձ կթտակցին : Մը բազէ թւղեցի նրան կրճքիս սեղմելով ամբողջ աչխարհին յայտարարել, որ նա ի՛մն է :— Բայց պատիւս, ժողովրդական գառաստանը . . . հասրս ամուսինը, որ սիրում է նրա՛ն, ուրեմն նա իմն լինել չէ՛ կարող — ահա հարցեր, որոնք հրէջի պէս առաջ

ցցուեցին : Պատիւս ու խանդս իրար միացած ցնցեցին ինձ . մեռցրի մէջս առաջացած սիրային կիրքը . . . և . . .

Ասանց սպեկայութեան վերցրի գետին ինկած գաշոյնը, և մինչ նա ինձ երախտադիտական փայտայանք էր շոտչում, խրեցի նրա կարճքը . . .

\* \*

. . . Ութ օր է անցել այն օրից, ինչ ևս դրում եմ այս պատմութիւնը, բայց զես այժմ էլ աչքիս առաջն է, թէ նա ինչպէս վերջին անգամ մի խոսց արձակեց և գետին փռուեցաւ . . . Իսկ ևս ծունկս նրա կրճքին դրած, գաշոյնի կոթը ամիս մէջ՝ նրա բայ, բայց մեռնող աչքերն էի գլխում լուսնի լոյսի տակ :

Եւ երբ նա վերջին շունչը արձակեց, կարծես իմ սրտից մի լեռ փլաւ . և ևս նրա ստան չի՛մունքի՛ վրայ ծակեցայ ու առաջին անգամ համբուրեցի . . . :

(1909)



## ՀԱՅՐԵՆԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Վերջին ամիսները հետզհետե՛ս աւելի ու աւելի ուրախօտի լուրեր էր ստանում Բարա Մանուկը, և կարծես զրա համար էլ՝ սկսել էր աւելի շուտ, աղօթարանը դեռ չբացուած վեր կենալ անկաղնից և հազիւ լուացուած ու ինչ որ աղօթք մըւմը ապով ուղիւ սրձարանն էր իջնում, շատ անգամ նոյն խոկ սպասոււմ փաղսց մինչև դուան բացուելը:

Բարա Մանուկը բարի մի ծերուկ էր, իր հայրենակիցները և բոլոր ծանօթները խորին յարգանք ունէին դէպի նա, թէև ծերութեան կնճիւռները պատել էին լայն ճակատը, մազերը ճերմկել էին, մէջքը փոքր ինչ ծուռել, և փայտով էր քայլում, բայց արամարանութիւնը տեղն էր և միշտ

նորութիւններ լսելուց յետոյ, ամենայն վստահութեամբ սկսում էր իր եզրակացութիւններն ու ենթադրութիւնները քաղաքական զանազան հարցերի մասին...

Նարկիրան կկրում էր նոյն խոկ ժամերով, և Բարա Մանուկը իր չըջատատոյներին պատմում էր ու պատմում, ուշադրութիւն չդարձնելով ընտա՛ որ գուցէ հարիւրերորդ անգամն էր միևնոյն պատմութիւնը կրկնում:

Բայց այդ օրը գնաց իր ձեռքով մի լրագիր գնեց, երկաստարդներից մէկին նսանցրեց քովը, կարդալ սուտու այն մասը, որը իրեն պէտք էր ու սկսոււ մտիկանել:

Նա լսեց վերջապէս, որ ճանապարհները բաց են, ամէն ուղողը կարող է վերադառնալ իր երկիրը, իր սուռն ու տեղը: Լսեց, որ սահմանապահ զինուորները այլ ևս գնդակահար չեն սնի հանդիսող հային, նա լսեց, որ չկայ այլևս այն դուռումը, որ մոխիր, աւերակ դարձուց էր-

կիրը և իրեն պէս շատերին ցրել սուտ հեռու հեռու երկիրները, պանդխտութեան, թշուառութեան գիրկը:

Երիտասարդը կարգում էր լրագիրը բարձր ձայնով և մաքուր արատանութեամբ, իսկ Մանուկը ծնօտը դրած գաւազանի գլխին, սրը բռնել էր ամուր՝ երկու ջրբառ ձեռներով, ուղիղ նայւած էր ընթերցագի բերնին:

Երբ երիտասարդը վերջացուց յոգուածի ընթերցումը, կրկնեց վերջին — Դէպի Երկիր — խօսքը բարձր ձայնով և սաքի կանգնեց:

Բարա Մանուկը դեռ ապուշ, ապուշ նրա բերնին էր նայում:

Բոլորը բեկին, — սպասում էին Բարայի եզրակացութիւններին, նա խելօք մտրդ էր, բոլոր այնտեղ եղողները նրա խօսքերին աւելի էին հաւատում, քան լրագրի գրածներին, նոյն իսկ երիտասարդները, և եթէ նա ասէր սուտ էր գրում լրագիրը, բոլորն էլ աւանդ վիճարանու-

թեան պիտի ընդունէին. նա բացարձակ հեղինակութիւն էր:

Բայց այսօր նա ոչինչ չխօսեց. ճակատը դրաւ գուազանի գլխին, սկսաւ նաշիլ ուղիղ դեմնին, իր ոտներին ու մըտածել: Լուսթիւն տիրեց սրճարանի մէջ, փախում էին, բայց բարձր չէին խօսում:

Բարա Մանուկը վեր կացաւ անղից, սրճարանի երկայնութեամբ մի երկու անգամ գնաց, եկաւ, սպա կանգ սուտ սրճարանապետի դէմ առ դէմ:

— Ի՞նչ է իմ պարտքը քեզ, հարցուց յանկարձակի կերպով.

— Թող մնայ, յետոյ հաշիւ տեսնեմ, ասեմ:

— Ո՛չ, հիմա՛, հիմա՛:

Սրճարանապետը, նաև միւսները թեթեւ մարտեցին ձեռքնու աչք ձեռից, այսքան լրջութիւնից:

Լուսթիւնը տիրում էր սրճարանի մէջ. Մանուկը իր լայն գոտիի միջից հանեց քսակը, վճարեց իր պարտքը սրճապետին,

վերցուց գաւազանը, շտապ քայլերով  
ուղղուեցաւ դէպի գուռը :

Մէկ օտարը դռնից դուրս դրած, միւսը  
դեռ ներս՝ կանգ առաւ, ետև՝ դէպի նըս-  
տողները դարձաւ, գաւազանը բարձրա-  
ցուց և ասաց. — Տասներհինգ տարի է,  
տասներհինգ տարի, — գաւազանը ուժեղ  
կերպով շարժելով օդի մէջ — հերիք չէ՞ . . .  
Հը՞ . . . ու դուրս եկաւ դռնից :

Ոչ սք ոչինչ չհասկցաւ . . .

\*  
\*  
\*

Երկու ժամ յետոյ բարեկամներն ու  
հայրենակիցներից շտապը հաւաքուել էին  
Բարս Մանուկի մօտ, — մի փոքր անակ  
քաղաքի յետ ընկած թաղերից մէկում :

Ամբողջ ընտանիքը օտքի վրայ էր և  
յուզուած դրութեան մէջ. թէ՛ ուրախ և  
թէ՛ տրտում տրտամաղբութիւն էր արտա-  
յայտում ամէնքի դէմքը :

— Ախրը այսպէս չի՞ կարելի, Բա՛րս,  
— համոզում էր մէկը Մանուկի քովը նըս-  
տած :

— Թո՛ղ մնայ դարնան, մենք բոլորս  
ենք գնալու, բոլորս, ս՛ղ է մնալու այս  
քամբախտ երկիրը, — շարունակում էր  
միւսը :

— Ամենազլխաւորը՝ Բարս՝ Մանուկ,  
դու մոռանում ես, որ արդէն ձմեռուայ  
մէջն ենք, շուտով դեկտեմբերը կը մըտանք,  
իսկ քեզ խօ բոլորիցս աւելի լաւ յայտ-  
նի է, թէ ինչ ձմեռներ է լինում մեր կողմերը :

Բայց Բարս Մանուկը ոչ մէկին պա-  
տասխան չէր տալիս, նա ասանց դադար  
առնելու նորգիլան էր կկկացնում :

— Այդպէս ձեր վիճակովդ, — լուռ թիւնը  
խղեց դասն ետև կըկըած բարեկամը, —  
դու ի՞նչպէս պիտի անցնես այդ ձիւնա-  
պատ լեռները, այդ ձորերը, ձմեռուայ բուք  
ու բորանը այժմ թռչուններին է խեղդում,  
թռչուններին, իսկ դու տան մէջ հազիւ ես  
քայլում :

— Սրչա՛կ, Մի՛հրան, ս՛րդիքս, — դար-  
ձաւ նա իր դաւախներին, — մինչև երկոյ  
ձեր բոլոր գործերն ու հաշիւները մաքրե-

ցէք, ամէն բան կարգի գրէք, ստնկիւք, սալիք, ինչ որ ունէք չունէք գշտակցէք, — ճամբի պատրաստութիւն, ինչ որ է տեսէք, — վաղ սուսուտեան սնպատճառ ճամբայ կնք ընկնելու:

Կարծես ստան ջուր լեցրին բոցրի վրայ:

Այլևս իզուր էր շարունակել համոզել խորհրդաւոր լուսթիւնը գարձեալ ախրեց չորս կողմ. բոցրը մտածու՛մ էին ինչ աւնելիքնին:

Այդ բապէին ներս մտաւ Տէր Օհանը, նոյնպէս գաղթական, պատկառելի գէմքով մի ձերուկ, որի ձերմակ միրուքը փառայեղ կերպով ծածկում էր լայն կուրծքը, և ալիքանման փուռում, տարածւում էր մինչև գօտին:

Բոցրը ուրբի կան, Տէր Օհանը նրանց վերի անկիւնը:

— Ուրեմն ճիշտ է — եղաւ «Աստուած օրհնէ» ից յետոյ՝ ստաջին խօսքը — լսեցի, բայց չը հաւատայի: Այս ձիւն ու ձմրան...

— Մենք էլ հէնց այ՛դ կնք տտում, Տէ՛ր հայր, — վրայ լերին անմիջապէս մի քանխը:

Գարձեալ պիտի սկսէին սովորական խրատները, երբ վեր կացաւ Բարս Մանուկը, իր կուցած մէջքը ուղղեց, ձևները տարաւ սպիտակ ծնօտը շօշափեց, մի խոր հասաչ քաշեց, գլուխը շարժեց մեղմ ժպիտը երեսին:

— Է՛, Տէ՛ր հայր, դուք է՛լ որդիք, ինձի չէք հասկնար, ես ձերացեր եմ, մի սաս արդէն գերեզմանն է, ես մի գարուն էլ գուցէ չտեսնեմ... կ'ուզեմ իմ հայրենի գիւղի օդը մի վերջին անգամ էլ ծծեմ... մեր զուլայ աղբիւրի ջուրը մէկ էլ լսեկ... վերջին ցանկութիւնս է, իմ ասն, իմ գիւղի մէջ մեռնել... իմ հայրերի մօտ գերեզման պատկիկ...

Արտասուքը խեղդեց ձերուկին և նստց կես չկարողացաւ շարունակել...

Բոցրը լուս և մունջ թողին անկց դուրս կիան...

\*  
\*  
\*

Ութ օր էր որ քայլում էին, ձիւնն  
 Ակել, լուս, ձոր ու դաշտ ծածկել էր. մի  
 կէտ անգամ չէր երէւում սեւ, ընդհա-  
 նուէր սպիտակութեան վրայ առաջ էր շարժ-  
 ւում կամայ, դանդաղ մի փոքրիկ խումբ  
 մարդկանց կարաւան, եթէ կարելի է այդ  
 էլ կարաւան անուանել:

Բարա-Մանուկը նստել էր մի կզան  
 վրայ. նրա երկու որդիները, երկուքն էլ  
 քահնել ու հարիճ, շրջապատել էին նրան.  
 ամենափոքրը կզն էր քշում կռեկոյ, խոկ  
 միջնակը, որը աւելի սուղջ էր ու յաղթ-  
 անդամ, առաջ ընկած՝ իր ուժեղ սաներով  
 ճանապարհ էր բաց անում:

Մեծ որդին նրանց կռեկոյ գալիս էր  
 մի ուրիշ կզան կողքով, որի վրայ նստել  
 էր իր կինը, սուջեն ու կռնակը ունենա-  
 րով երկու երեխաները:

Նոր եկած թանձր ձիւնը, սուղջոյ  
 գնացողի քայլերից, որպէս ջրի ալիքներ  
 կողքերի վրայ շուռ էր գալիս. կաղնուում  
 էր մի առու կակուղ արտում գութանի

քաշած ախոսի պէս, և մեր ճամբորդները  
 առաջ էին շարժւում կամայ ու դանդաղ,  
 կզան քայլերով:

Ոչ ոք չէր խօսում. բոլորն էլ լուռ  
 էին, ամպամած եղանակը կարծես ազդել  
 էր բոլորի վրայ էլ: Բայց բոլորն էլ գըլ-  
 խիկոր միեւնոյն բանն էին մտածում. . .

Ոտաւորները ինչ և է, աւելի դիւրու-  
 թեամբ էին քայլում, թէև երբեմն երբեմն  
 սաները աւելի էին խրում թանձր ձևան  
 շերտերի մէջ. բայց ուժեղ էին բոլորն էլ.  
 խեղոյն ձևանափայտի վրայ կոթնելով դուրս  
 էին թռչում:

Իսկ կզների ճամբորդութիւնը շատ էր  
 դժուար. յաճախ ընկնում էին, և այդ  
 ժամանակ պէտք էր լինում իջնել վրայի  
 նստողներին, վար առնել թեթև բեռները,  
 կզը հանել կանգնեցնել, բեռը դնել վրայ  
 — մի քանի հին վերմակ, մի երկու տոպ-  
 բակ մանր մուներ և ուտելիք. — նստեցնել  
 ձերուսուս կամ կնոջ ու երեխաներին և  
 էլի շարունակել ճամբան. . .

Չանձրայլ՝ միօրինակութիւն, ճամբորդութիւն չէր, այլ տածանելի աշխատանք...

Բոլորի դէմքն էլ թախծոտ էր. Բարա-Մանուկը վերջին օրերը սկսել էր սրկաբանալ. ճանապարհի նեղութիւնն ու ցուրտը ազդել էին նրա արդէն սկիւր մարմնի վրայ, և նա այնքան էր թուլացել, որ հազիւ կարողանում էր ինքզինքը կզան վրայ պահել:

— Դէ՛հ, ո՛րդիք, դէ՛, — մտածում էր ծերուկը հազիւ լսելի ձայնով, որովհետև բերանն ու ականջները ամուր կապել էին ցուրտ շանելու համար, — Աստուած մեզ հետ լինի, քիչ մնաց հա՛...:

— Ինու բաւական ճանապարհ էլ ունինք գնալիք, մինչև մեր գիւղը հասնինք...

Թէև խօսում էին, բայց ոչ ոք ոչինչ չէր հասկանում, բոլորի ականջներն էլ ամուր կապած էր, բայց բոլորն էլ միեւնոյն բանն էին մտածում...

Իրենց գիւղը... Իրենց տունը... հին ծանօթների, բարեկամների հետ առաջին

հանդիպումը...

Մտքերի խաղաղ ընթացքը յաճախ խանդարում էր երեխան, ճւռում էր ամբողջ ուժով, և մայրը ամեն անգամ պիտի կանգնեցնել տար կղը, ծծի պտուկը երեսխայի բերանը դնէր, ձայնը կարեցնէր, նոր շարունակէր քայլել. սրբ պատճառով շատ անգամ մեծ որդին իր ընտանեկրով՝ ետ էր մնում ստաջիներից:

— Ամպերը հաւաքւում են, — կանգ առաւ միջնակ որդին, ետև նայեց և կանչեց մեծ կղբորը, որ դարձեալ ետ էր մընացել, — ճանապարհը էր կորցնենք, միասին գնանք, — մանուսանդ որ լինք՝ մեծ կղբոր պէս լաւ չգիտէր ճանապարհը:

Բարա Մանուկը՝ փաթաթուած դէմքը, զրեթէ կապուած աչքերը բաց արաւ նայեց շուրջը, ուշադրութեամբ դիտեց առաջ բարձրացող լեռը, շրջապատի բլուրներն ու ձորերը, ոչ հեռուն աղմուկով վազող առուակը:

— Է՛հ, — կանչեց կարծես մանկական

հրճուանքով — Մինաս, — այսպէս էր միջ-  
նեկ որդու անունը, որ այդ բողեփին ձեռ-  
քը եղան զլիսին դրած, դէպի ետ, դէպի  
մեծ եզրայրն էր նայում դեռ, — դարը գըլ-  
լսին բարձրանանք, հերիք է... այդտեղից  
մեր գիւղը կ'երևի... այդ տեղ հերիք է...  
— ցոյց էր տալիս մնասով զիմացի լեռը:

Եւ էլի ընդհանուր լուսթիւն... դարձ-  
եալ ով զիտէ ինչ խորճողածութիւններ  
եկան պաշարեցին նրան: Մինասի օգնու-  
թեամբ էլի փաթաթուեցաւ, մինչ այդ  
արդէն մեծ որդին էլ հասել էր և սկսան  
դարձեալ քայլել...

Ճանապարհը հեռո՛հեռէ աւելի ու ա-  
ւելի դժուարանում էր. պէտք էր բար-  
ձրանային մի բաւաճան բարձր լեռ. ճա-  
նապարհ չկար բոյսրովին. ամպերը խը-  
տանում էին, թեթեւ քամին սկսաւ, սրն  
ամենից շատ էր վախեցնում, նոյն խոկ  
սարսափեցնում մեր ճամբորդներին:

Քանի բարձրանում էին, ձիւնն այնքան  
աւելի հաստանում էր, հեռեւորար և ձեղ-

քելը դժուարանում:

Սկսաւ կամաց կամաց ձիւն էլ տե-  
ղալ. նման կարծես եղան քայլերի դան-  
դաղութեանն.

Մօտիկը ոչ մէկ զիւղ չկար, պէտք  
էր բարձրանային, իջնէին, որ նոր իջնե-  
ւանէին մի գիւղ:

Թէև յոգնել էին, բայց պէտք էր ըչ-  
տապել: Մինասը առաջից աւելի արագ  
սկսաւ գնալ, միւսները իրենց զուազան-  
ներով սկսան հարուածներ իջեցնել յոգ-  
նած կենդանիներին. բայց շատ քիչ փա-  
փախութիւն կրեց քայլերի արագութիւնը:

Չիւնք հեռո՛հեռէ աւելի ու աւելի  
ստատկանում էր. քամին սկսաւ սուլել ձո-  
րերի միջով. սարսկոյս չկար որ մի փա-  
թարիկ պիտի բարձրանար, և բա՛քը ան-  
խուսափելի էր...

Կարուտներ աւելի՛ խտացաւ. գրեթէ  
իրար կպած, իրար կողքով էին քալում:

Վը՛ղը, վը՛ղը... սուլում էր քամին  
անդադար չզիտես ո՛ր տեղից, ոյրուում

էր, գեանին էր խփում, վեր էր բարձրանում, օդի մէջ սրայա էր տալիս և թարմ ձեան հատիկները ուժեղ թափով քշում էր ամառում, ս'վ գիտէ որ քարի տակին դարձեալ դիպում...

Վայելը դժուարանում էր, ճանապարհ կորցնելու երկիւզներ կային, այս ու այն կողմ տեսնելը անհնար էր դառնում, ձեան հատիկները քամու հետ մզում՝ չէին թողնում աչքերը ազատ բանալու... եզներն էլ դժուարանում էին շարունակել, նրանց աչքերն էլ էին լեցւում ձիւնով, փայտի հարուստները տեղի ուժգին էին իջնում. պէտք էր գնալ...

Փոքրիկը սկսաւ աւելի ձգալ, բայց շրտ անգամ ոչ ոք ուշադրութիւն չդարձնւոյ նրա վրայ:

Բարա Մանուկը քիթ ու բերանը, նաև աչքերը կապկպած՝ սկսաւ մի սոսկալի հազ. երեք որդիները երբեմն երբեմն իրարու երեսն էին նայում և լուռ... .

Թօղ ու դուման, բուք ու բորան

բունել էր չորս կողմը, փոթորիկը մարդ էր վերցնում, սառ քամին մարդու սակորների մէջ էր մտնում. հինգ քայլ հեռաւորութեան վրայ այլ ևս մէկ մէկու որոշել անհնար էր...

Ճանապարհը կորել էր բոլորովին, ս'ւր լինելը՝ սարի կատարին թէ լանջին, իրենք էլ չէին իմանում. այլ ևս ս'չ մի շարժում...

Վար իջան եզներից Բարա Մանուկն ու հարսը, երեք որդիների օգնութեամբ մի փոքր էլ սուսջ շարժեցին. բայց փոթորիկը, ձեան անձրեք սուշեից փչելով կարծես կարում էր ճանապարհը... ձերուկի քայլերը մանաւանդ անհնար էր. ամէն մի քայլափոխին սաները սահում էին, և ընկնում էր...

Մի մեծ քարի տակ իրար վրայ կըծկուեցան ու մնացին, եզներն էլ իրենց կողքին:

Բուք ու բորանը երկա՛ր լուռ շարունակւում էր... ցուրտը մարդու սակոր-

Ներքի մէջն էր մանոււմ...

\*  
\*\*

Փոթորիկը մեղմանալուց յետոյ՝ երբ միջնեկ որդին հօրը վեր էր հանում, կարծելով թէ քնած է, նա չէր շարժուում...

—Սառել էր...

Փոթորիկից յետոյ՝ հարը երբ որդուն շարժեց ծիծ սաղու համար, կարծելով թէ քնած է, նա չէր շարժուում...

—Սառել էր...

Իսկ հայրենի գիւղը հեռուն հազիւ նշմարոււմ էր ընդ հանտար սպիտակութեան մէջ որպէս մի սև բիծ...

(1909)



## Ո Ի Ս Ո Ի Յ Ի Չ Ը



Մտնը կը վառէր սեղանին վրայ. լոյսի ճառագայթները որքան դէպի սենեակին անկիւնները կը տարածուէին, այնքան կ'անօտարանային և կը կազմէին խափանցիկ սղջամուղջ մը:

Աջ անկիւնը, մահճակալին մէջ կը նկատուէր մարդու կերպարանքով կմախք մը, անորոշ՝ որպէս ստույգ:

Մտին պատրոյգը սպառելու վրայ էր. փոքրիկ բոցը կը պլպլար, իսկ մահճակալի վրայի դէմքը կը դողար, կը շարժէր, կարծես լոյսին երեքալուն հետ միասին: Երկար, խռիւ ճերմակ մազերը ալիքանըման ծածկեր էին բարձին մէկ մասը, ըսպիտակ մօրուքը խառնուէր էր վերանկի սառանին հետ: Կը քնանար...

Փողոցը՝ չուներու հաչոցէն բարձրացաւ անախորժ ազմուկ մը:

Կմախքին վրայ փայլեցան երկու խոշոր աչքեր, որոնք քանի մը բռպէ անթարթ՝ պլպլացող լոյսին յառեցան. սաբո՛ սամբողջ գլուխը վեր բարձրացաւ քիչ մը և խկոյն բարձին վրայ ինկաւ նորէն:

—Ո՛ւ... ի՞նչ ցո՛ւրտ է...— մրմնջեց, ու ինչպէս խղունջը սրտաննին մէջ կ'ամփոփուի, գլուխը վերմակին տակը քաշեց ու փաթթուեցաւ:

Թեթե հոյը՝ հեան առած չուներու տնոցը կը շոյէր սրտուհանին ասակինները, սննեակին խորհրդաւոր լուսթիւնը աւելի մուսյ ու աւելի ճնշող կը դարձնէր:

Ծերուկին հազիւ հեւացող չունչը շա՛տ էր անզօր չորցած մարմինը տաքցնելու նօսը վերմակին տակ. գլուխը կամացուկ մը դուրս... մտը մարելու մօտ էր...

Անկողնին մէջ անկուեցաւ կմախք մը. ակեզարդ մեծ գլուխը հազիւ կմնգուն կը կենար բարակ, ծղօտի պէս նիհար վզին վրայ:

Փողոցումն ու ոսկրատ մասները երկարեց քովի աթոսին վրայէն առնելու հազուատները:

Հազը սկսաւ... կուրծքի խորքէն բան մը կ'ուզէր քակուիլ դուրս դալ, բայց վերջ չունէր... Մէկը կը հեռուէր միւսին նման ծովու այլքներուն, սր երբ մէկը տիւր ժայռերուն զարնելով կը փչուր՝ յաջորդը անմիջապէս կը շատպէ անոր տեղը բռնելու:

Բերանը բաց, գլուխը երկարած ամանին վրայ կը տըքար... ի զո՛ւր... աչքին կապիճները աւելի լայն կը բացուէին, դէմքը կը կարմրէր, վզին երկու կողմի երակները կ'ուռէին, որպէս ոլորապտոյտ կտալոյտ սրղեր, կրճքային դիկոցը կը շարունակուէր... անվերջ...

—Ը՛հ, ը՛հ... աքալով բերանը սրբեց ձերուկը ու շարունակեց հազուատը հազնիկ:

Մտը վերջին շողերը կ'արձակէր, անգամ մըն ալ պլպլաց և մինչ ձերուկը

դողզողալով շտապեց ուրիշ մը վտակ, արգէն մարեցաւ...

\*  
\*\*

Խաւարը արեւոյ սենեկին մէջ: Ապակիները շոյտոյ թեթեւ հովը այժմ կը Ֆշշար պատուհանին տակ, տանիքին վրայ, և որպէս կենդանի արարած մը, կարծես կը մանէր ծխներոյզէն և վառարանին լաշն խողովակներուն մէջ մեզմ հրած շտապութիւն մը կը կողմէր. սպա դուքս ելլելով սենեակին մէջ կը տարածուէր:

Ծերուկը երերուն քայլերով մութ սենեկին մէջ կը փնտռէր լուցիկին, որ ճրագ վառէ, լոյս տայ խաւարին. Ծանր էր մութին մէջ կենալը. ամբողջ շրջապատը իր դատարկութեամբ: Եւ ունայն կրով սարսուսեցուցիչ էր, իսկ խաւարը կը գերազանցէր այդ ամէնը...

Ծերուկին յիշողութիւնը կը վրիպէր լուցիկին սեղը գանձու: Ընդհանրապէս սկսաւ շօշափել անկիւնները, սեղանին վրայ, բար-

ձին տակ, — չկար: Ծօշափեց նոյն իսկ երկու աթոռներու վրայ. կուտցաւ, ձեռքերը յատակին ալ քսեց, — դուցէ վար էր ինկած պատահամբ. — չկար ու չկար:

— Ը՛նը, Ը՛նը... սկսաւ նորէն ձեռունու հողը. անդնդայէն խորութիւնէն դուրս կուգար ձայնը, կը տարածուէր սենեակին մէջ, կը զարնուէր պատուհանին ապակիներուն, կը խառնուէր քամու նուոցի հետ, կամ կը մանէր վառարանին խողովակը, դուրս կուգար ծխներոյզէն և քրշուելով քամիի հոսանքէն կը թռչէր հեռունը, ով զիտէ ս՛ր դժբախտի պատահանը ձեռնկու, տունը մտնելու և դարդոտ սիրտերու ցաւը խառնելու...:

\*  
\*\*

Քառասունհինգ ասորի է, որ Եղիշէն ուսուցիչ էր:

Վերջին ժամանակները, երբ մաւառ-բապէս յոգնէր էր ու ֆիզիքապէս քայքայուէր, երբ աչքերը այլևս լոյս չկար,

դադրեցուցին զինքը պաշտօնէ: Կտրեցին նաև այն ճիւղն ուճիկը, որ հաղիւ իր օրագահիկը կ'ըլլար: Մերուկը ապաւինեցաւ պորմածութեան բարեպաշտ սքուտկետ՝ մը, որ քաղքի խոյ թաղերէն մէկուն մէջ փոքրիկ, խալխոյժ անակ մը դրաւ անոր արամազբութեան տակ, կեանքին մնացած օրերը հոն անցնելու:

Վերջին շարժմենքն ա՛յ տունէն դուրս չէր գար: Չմեռ էր, ցո՛ւրտ, ս՛ւր երթար: Քանի մը օրը անգամ մը հեռաւոր, շատ հեռաւոր ազգականուհի պատաւ մը, ան ալ իրեն նման աղքատ, քիչ մը հաց ու պանիր կը բերէր, կը թողուր ձերուկին ու կը հեռանար:

Եղիշէն բոլորովին մինակ էր այս աշխարհիս վրայ: Քառասունհինգ տարի շարունակ աշխատեր, կեանք էր մաշեր միմիայն ուրիշներու համար:

\*  
\*\*

Բերանը լեզի էր, ուղեց ծխել անհուն փափաքով մը: Միախտտի տուփը բարձին

տակն էր. դատաւ, զգուշութեամբ բանալէ յետոյ՝ աուփին չորս անկիւնը շօշափեց.— դատարկ էր, ոչինչ չկար մէջը:

Բայց ան կ'ուզէր ծխել ձերուհինեւրուն յատուկ ախորժակի անհուն փափաքով... .

—Շունչ մը, միայն շունչ մը,— բայց ս՛ւրկէ.

Եղիշէի սիրաբ ալեկոծուեցաւ:

—Այս էր վիճակուած ինձի,— շնչացին անոր շրթունքները: Ինք ալ զարմացած մարդկային ձայնէն՝ աչքերը լայն բացած շուրջը դիտեց... .

—Այս էր վիճակուած ինձի.— կրկնեց նորէն նոյն խօսքերը, որպէս արձագանգ առաջինին, ինքն իր վրայ նայեցաւ այս անգամ և արցունքի տաք կաթիլներ դուրեկով՝ սահեցան անոր սկրուտ այտերուն վրայէն:

Հազը նորէն սկսաւ...ուժասպառ՝ բարձին վրայ ինկաւ:

Աչքերը կը փակուէին անուժութենէն:

բայց ծերունի ուղեղին մէջ երեւակայութիւնը կը վառէր տառապանքի հարուածներէն առաջացած կայծերով: Սև յուշերը սև գիշերներուն կուգան:

Ամբողջ անոր անցեալը թէև տառապանք էր եղած, բայց ո՛չ մէկ անգամ այսօրուայ չափ խորը չէր խոցուած անոր սիրտը. այսօր ան արիւն կուգար:

Ուժերը կը սպառէին տակաւ, կէսքուն կէս-արթուն վիճակի մէջ վերմակի տակ ծածկուած կը հեւար արագ, որ կորենայ առքնայ:

Ծերունի Եղիշէն երեւակայութեամբ դնաց այն օրերը, երբ ինք հաղիւ քսան տարեկան էր, երիտասարդ, կայստո ու վտուվառն, դպրոցը աւարտելէն անմիջապէս ետք՝ մտաւ հասարակական ասպարէզ: Ահա՛ աշակերտական սեղաններուն վրայէն երեւակայած ուսուցիչն է, հարիւրուոր մանուկներ իր բերնին կը նայէն... Օ՛, ինքը այժմ տէրն է ամբողջ դասարանի մը, եւան լը կը կրկնապատկէ, կ'ու-

զէ օգտակար ըլլալ ամէնո՛ւն, ամէնո՛ւն...

Ահա՛ դպրոցը արձակուեցաւ, աշակերտները ցրուեցան, ամէնէն վերջը, ինքը տեսարկներու դէզ մը անութին տակը դրած՝ տուն կ'երթայ... սենեակը պարզ է ու ազքատիկ, փոքրիկ սեղանին առջև, աղօտ լոյսի տակ աշակերտներուն տեսրակները կը սրբազրէ, առաջինին կը յաջորդէ երկրորդը, երրորդը և անվերջ. որքան ալ շատ են... բայց ինքը չի՛ յոգնիր, չի՛ ս'լ ձանձրանար. երբ յաջող շարադրութեան մը կը հանդիպի՝ կը ժպտի... և այդպէս ժամեր...

Հազը եկաւ կտրեց երեւակայութեան թելը:

Քամին աւելի ու աւելի ուժգին թափով կ'ունար դուրսը. ապակիները կարծես կը փչրուէին. կտրկտախտան ձիւնը չփշիպով կը ծեծէր փեղկերը. կտորած ապակիներու ճեղքերէն անցնելով սենեակին մէջ կը հոսէր: Վառարանին խողովակը աւելի սաստիկ կը վայէր, կը թուէր

թէ ինքն այ կը դողայ . . .

Ներկան ու անցեալը, իրական կեանքըն ու երազայինը, սգեւորութեան, պատանեկան խօյ թռիչքներու թոյլ համեմատութիւնը իրար խառնուեցան, ճիգ կը թափէր շատ մը ծանր հարցերու պտտախանը դանելու, բայց կը դժուարանար, կրճքային ծանր շնչաուութիւնը ջէր թաղար որ կեդրոնանար ան :

\*  
\* \*

— Այն ատեն ինձի պէտք ունէին, — ավրադին ձայնով մը շնչաց, — օգտակար կրնայի ըլլալ, իսկ այժմ անպէտք իր մըն եմ, անօգուտ ոչնչութիւն մը . . .

\*  
\* \*

. . . Նախ՝ անսուշ թմբութիւն մը եկաւ Նդիչէի վրայ, ետքը գլուխը ծանրանալ սկսաւ :

. . . Քասարանն է, մարդակազմութեան դաս կուտայ : Սեղանի վրայ դրուած է մարդու կմախք մը, իւրաքանչիւր սակրի

անունը կուտայ ու անոնց պաշտօնը կը բացատրէ աշակերաններուն . . . : Աչքի լայն, դասարկ խոսուչք ուղիգ իր վրայ է յատած :

Կմախք է, անշարժ պիտի ըլլայ, բայց անոր ձեռքերը կը շարժին, ան սակրուած մշաները կը խափահարէ, ուրբերն այ կը շարժէ . . . Կմախքը կը մեծնայ հետզհետէ, աւելի ու աւելի աչանդակ կը դասնայ, դասարանի մէջ մտար անոր շարժուն սակրներն են բռնած : Աշակերանները սարսափահար կը գոսան, իրար կ'անցնէն, պատուհաններէն գաւրս կը թռչին : Ինքը կ'աշխատի շարժուն սակրները սեղանին վրայ հասարկի, կը համոզէ աղաները որ սեղերնին կենան, սակրները աւելի ու աւելի կը մեծնան, կմախքը զարհուրելի կերպարանք մը կը ստանայ, բոլոր աշակերանները կ'անհետանան, եւ ինքը կը մընայ միս մինակ կմախքին հետ . . .

Սարսափէն, կ'ուզէ փախչիլ զէպի գուռը, կը վազէ — կը նրէ ուժով — փակ-

տևած է — չի բացուիր — կմախքը իր վրայ  
կը յարձակի, սպառնական է անոր դիրքը,  
ինքը դռան ետին կը կծկուի... կմախքը  
կը մտանայ, ոսկրուտ բազուկները կ'եր-  
կարէ, ջղուտ մասներովը կը բռնէ իր  
կտորովը, կ'ուզէ ճշտ, բայց կտորովը սեղ-  
մուած է, ձայնը դուրս չէկեր, միայն խը-  
ռոցի ձայնը կը լսէ: Կ'ուզէ գիմաղբկ,  
ողգտակ դնոր ճանկերէն, բայց անիկա  
չսառ ուժով է իրմէ, մէկ ցնցումով գետին  
կը ձգէ զինքը, ոսկրացած ծունկը կուրծ-  
քին կը սեղմէ, աչքի խոռոչները ուղիղ  
իւր աչքին յառած...

Ինքն ալ կմախք է դարձեր, յտասկը  
անդունդ է բացուած... խոր, խոր ու  
մութ գերեզման... կ'իջնէ, վարը կ'իջնէ,  
պատկամ է խոնաւութեան մէջ... Ձիւ-  
նախառն հողի կոշտերը կը թափին արագ  
... ոսկորները կը ցաւին... սէյ, այս  
մէկ կոշտը գանկի ուղիղ մէջտեղին զարկաւ  
... ցաւը սաստիկ էր, ոտները հետզհետէ  
կը ծածկուին հողով, շարժուիլը անհնար

է, կմախքն ալ ուժով կը սեղմէ, անոր  
իրանը գերեզմանէն դուրս է, միայն ձեռ-  
ներն ու ստներն են փոսին մէջ... հողն ու  
քարը խառն կը թափի արագ ու կը բար-  
ձրանայ տակաւ... աչքերն ալ լեցուելու  
վրայ են, ա'լ բան մը չի տեսներ, շունչը կը  
կարի աճա, բերանը լեցուեցաւ հողով, վեր-  
ջին շունչը կը դժուարանայ փչելու... կո-  
կորդի պատերը իրարու սեղմուեցան...

Ծերուկը ցնցուեցաւ, ճշտց ու վեր-  
մա'լը մէկ կողմ ձգեց:

Վեր թաւ սնկողնէն ու ցից կեցաւ  
խոտարին մէջ: Իսկոյն չհասկցաւ թէ ուր  
է, և ինչ կըլլայ... սպակիները կը զընդ-  
զընդային նորէն, խողովակը կը սուլէր ու  
կ'ոտնար... խաւար էր ու ցո'ւրտ, ան-  
հուն գատարկութիւն, միմիայն լացող,  
մրմնացող վայնասուն...

Կ'ուզէր բարձրաձայն օգնութեան կան-  
չել մէկը. բայց ո'վ կանչէր... տանը մէջ  
ինքը մինակ էր... ուզեց դուրս երթալ,  
փախչիլ սննեկէն, դուռը ս'ր կողմն էր...

չօչտիերով պատերը հողիւ դառաւ, գեռ  
չէր բաշեր, քամու հոտանքը ներս խուժեց,  
կարծես աներևոյթ զօրութիւններ հրեցին  
զինքը գէպի սննեակի, գէպի գերեզման...  
Մեջմեջքն ոչ խուար էր, ննն ոչ քամին  
կ'սնար սարաւի՛խ սննոցով: Գուար վա-  
կեց արտոյ և քնքզինքը ձգեց անկողնի  
փրոյ չէշատարս:

Թռփերն ու աղիքները դուրս կը թա-  
փէին կարծես, տառնները կը կտրկու-  
փէին, ճնամները իրարմէ չէին գատուեր  
... արք քիչ էր սննեակի մէջ... քրտինքը  
ձածկեց ամբողջ մարմինը... օգ... գէպի  
պատահանը վաղեց, գողգոջուն ձեռքերով  
փեղկ մը բացաւ, մարմնին կէսով պատու-  
հանէն դուրս ձգուեցաւ ոչ առնելու... .

—Տա՛նկ, ար՛ընկ, աս՛նկ, ար՛ընկ—  
կը զօղանջէր եկեղեցիի զանգակը: Չոյնը  
կուգար բուռտիսն հեռուէն, և զիշերային  
խուարի մէջ ընդհարուելով քամու հո-  
տանքին, անորոշ, կցկտուր կերպով կը  
հուար:

Լուսնայու մօտ է ուրեմն.— մտածեց  
ուսուցիչը.— մարդիկ պիտի հաւաքուին  
եկեղեցին ու ազօթեն... ազօթեն իրենց  
հոգւ փրկութեան համար... իմ աշա-  
կերտներս ալ սնանց մէջ կ'ըլլան, մաքուր  
հագնուած, զարդարուած բոլորը եկեղեցի  
կուզան ազօթելու... .

Կիրակի ալ էր այդ օրը: Ծերուկը յի-  
շեց, որ իրեն յոյս տալու համար ըսին՝ թէ  
քահանան ծանուցում պիտի ընէ բարե-  
պաշտ հասարակութեան՝ յիշել իրենց նախ-  
կին ուսուցիչ Եգիշէն, իրենց հոգիի փըր-  
կութեան համար գոնէ տղարմին... .

—Ողորմեցէ՛ք... արձագանգ տուաւ  
անոր զրգուած ուղեղին մէջ քահանայի  
աղաչական ձայնը:

—Տա՛նկ, ար՛ընկ, աս՛նկ, ար՛ընկ—  
միօրինակ կը լսուէր զանգակին զօղանջը:  
Ուսուցիչը նորէն լսեց քահանային խաղաղ  
ձայնը:

—Ողորմեցէ՛ք ձեր ու թշուառ ու-  
սուցչին... ողորմեցէ՛ք ձեր հոգիի փրկու-

Թեան համար:

Եւ կը տեսնէ թէ ի՛նչպէս ժողովուրդէն քանի մը հոգի զժգո՛հ դէմքերով՝ զըրպաններէն կը հանեն սև տասնոյները եւ գանձանակը կը նետեն . . .

— Օ՛ օ՛ օ՛ — թափահարեց գլուխը տասնները կրճակլով — ապրի՛լ, սր մարդիկ խզճա՛ն, սղորմի՛ն . . .

— Չե՛մ ուզեր. — ճշաց մէկէն կոկորդային ձայնով մը, սր մանչկլով գնաց միանալու լացող քամիի և զօղանչող զանգակի վայնասունին:

— Չէ՛է . . . — աւելի ուժղին թափահարեց գլուխը: Հազը կարեց ձայնը, կ'ուզէր պտալ, կանչել, դուրս թափել վերջին հառաչը. տանջուած սրտի վերջին կտակը քարոսիրտ աշխարհին սուսնոցէլ, երբ բերանը ստաք նեղուկով մը լեցուեցաւ:

— Օ՛ օ՛ օ՛. — վերջին մուռնչ մը եւս արձակեց, աշտակարգ փայլով մըն ու լուսաւորուեցաւ անոր երեւակայութիւնը. ձերունին մարմնի ամբողջ ուժերը ի մի

հաւաքած՝ զօրեղ թափահարումով մը ճերմակ գլուխը զարկաւ պատուհանին կողմուն ու ցից ցից սրածայր երկաթնեկուն . . .

Խեղազար յուսահատութեան վերջին պոթիկումն էր: Արիւնը դուրս ցայտեց բերնէն ու գլխի վէրքերէն, և որպէս ջահ մը, սր մտրելու տատն փայլուն բոց մը կ'արձակէ՝ հազիւ կրցաւ արտատանել իր հպարտութեան մէջ.

— Չէ՛ . . . ու անչունչ, սրխնաներկ ճերմակ գլուխը կախուած մնաց պատուհանէն դուրս . . .

(1910)

## Թ Ա Փ Ա Ռ Ռ Ի Մ Ն Ե Ր

1

Գիշերը դուրս կեցայ...

Գանդազ քաղցիրով կը չափէի փողոցներու լայնքն ու երկայնքը: Երեւակայութիւնս արագ շրջան կ'ընէր... կ'օրորուէր հեռու ու մօտիկ անցեալի յուշերով... կ'անբժէր մշուշ սպառանք...

Կարիքի հսկայ բեռը կը ճնշէր կունակէս...

Ձայլայթս կը դեզուէին այն դահ ու երջանիկ դէմքերը, սրանք կ'անցնէին դոյզ դոյզ, ուրախ, անաարբեր, ճարպոտ աչքերը ճիճփացներով... Եւ երեւակայութիւնս սաւառնակը կը հեռուէր անոնց օթօմօպիլներուն ու կառքերուն, կը մոնէր հաստակուս պատերէն ներս... պալատներու բարձրաշէն պարիտպներէն ալ ներս... փարթամ սպարանքներու ննջարանները... խաւարին մէջ...

Կէս գիշեր է, կը շարունակեմ քալել...  
Թեւէս կը բռնէ փոքրիկ աղջնակ մը,  
աղաջական, խնդրող հայեացքը աչքիս  
մէջ...

— Alons! — Կը մրմնջէ հողիւ աղջիկը...  
— J'ai onze ans...

Կը բռնեմ ձեռքը, կը դադայ, և իրօք՝ ոսկորները դեռ կակուղ են:

Ոչինչ չեմ պատասխաներ, կը քալեմ, և աղջնակը խնձի կը հեռուի, թեւէս կը քաշէ կրկնելով միշտ.

— Alons ensemble! J'ai onze ans...  
ma soeur en a dix...

Ես կը դառնամ, — նոյն աղաջական հայցուածքը... կը բռնեմ ձեռքը, ու կը քալեմ հեռը:

Աղջնակը ուրախ է...

Ինչ կրնամ ընել...

Քաֆէ-Շանթանի մը դուռին ետեւ կեցայ...

Աթոռները կը յօրանջեն, շատերը ձանձրոյթէն քնացած են, երգչուհու յոգնած

վանկերը կը մարին տակաւ... .

Կը յաջորդէ պարունին, գլուխները վեր կը բարձրանան: Պարունիին սրունքներուն շարժումները տակաւ աւելի համարձակ կը դառնան. քնդհանուր հետաքրքրութիւնը կ'աւելնայ... քանի մը ճարտար պոստաներ սպ... շրարչներու ծաղփերէն կ'երեւի... քնացած ամոսները կը ցնծան ծափելու ազմուկին մէջ... :

Քովէս այնպարզ ծերուկը երեստ կը նայի, կը ժպտի մանկան մը հիացումով, անատամ ծնօտները կը շարժէ, շրթունքները իրարու կը քսի և լայն բացուած աչքերով միտը կը վնասէ... :

Հետուն կ'երեւին կարմիր լազանքներ... կը մօտենաւ... շարք մը սուներ. իւրաքանչիւր պատուհանէն տեսակ մը ձայն կը լսուի: Ահա՛ քանի մը գլուխներ կ'երեւին, կը խօսին ամէն լեզուով, ուրախ են ու քրքշուն... :

Կ'անցնիմ ասանց նախքաւ:

—Ներս եկուր, ներս... .

Կը նայիմ բնազդաբար դէպի ձայնը:

—Բա՛, Հո՛յ է եղեր... — կը բացազանչէ կանացի խապտ ձայնը:

Կ'անցնին քովէս, դատարկ փողոցներով՝ սրպէս տուերներ՝ տխուր ու մոայ մարդիկ, երբեմն և կիներ... .

Ո՞ւրիչէ կուգան, ս՛ւր կ'երթան. գիշերուան այդ պահուն. ինծի կը թուի թէ կը հասկնամ անոնց հոգիները... .

Կիներու Երեսներուն շարքները լուսչարաններու մէջ են թափեր ա՛յ, պչրտ ժպիտները անպաճոյճ անկողիններու բարձերու վրայ են թողեր... : Երիտասարդները գլխիկիր՝ վայելիր են խնդուլեմամբ մահուան սպառման քաղցր թունաւորումը. — մարմիններու հպում... շրթունքներու ճղբոցը... գիրկընդխառնում... և անկում, գահավէժ, փրփրայի անկումը քիչ առաջուան խրո՛խա հոգիներուն:

—Ինչո՞ւ կը բարձրանան մարդիկ:

- Միթէ անկումի՞ համար :  
 —Ինչո՞ւ կ'իջնան մարդիկ :  
 —Նրանի մի՞շտ բարձրանալու համար :

Լուսնաբու մնա է. կը նկատուիմ քայի-  
 րուս ընթացքին :

Նիհար ձի մը կը քաշէ քառակուսի  
 կառքը. քիչ ետքը կը կենայ : Ոտարտալիկ  
 ու ազար իր վրայ մարմնացնող սոցապա-  
 նը մէկ ձեռքը բաձը, միւսը աւել՝ կ'սկսի  
 հաւաքել դրան սաջիւ կուտակուած ազբը  
 և սայլը լեցնել :

Ահա՛ հաւի ոսկորներ բաձին վրայ,  
 ս՛վ գիտէ, ի՞նչ նուրբ մասներ ևն դպեր  
 այդ ոսկորներուն, ի՞նչ ձերմակ, մանրիկ  
 առամներ, էրիզային ալ չրթուեքներ ևն  
 փրցուցեր անոնց վրայէն միտին թերերը...

—Կը մտածուի :

Նիհար կենդանին կը քայէ, լա՛ւ գի-  
 տէ իր սրաչանը, ուր որ դիպուած ազբ կը  
 տեսնէ կը կենայ :

Գոյնզգոյն լախեր փոշիներու հետ խա-

որն սայլին մէջ կը լեցուին :

Ի՞նչ ձերմակ մարմնի, ս՛ր մասերը  
 գգուող կատրներ ևն սամբ :

Եւ բանն ու աւելը կը ժողվեն հազար  
 տեսակի ազատա իրեր, սրանք երբեմն շատ  
 կարճուր ևն եզեր...

Սայլը լեցան է... նիհար կենդանին  
 ս՛լ չի կենար...

Մ'ըքան աւելի կը ցնցուի սայլը քա-  
 րերուն վրայ, այնքան աւելի վար կը թա-  
 փին ձեզքուած կողերէն ազբին կատրները,  
 չեն ուղեր բաժնուիլ մարդոցմէ...

Ահա՛ վար ինկաւ կանոացի մաշած կօ-  
 չիկ մը, սոցապանը չի տեսու, մնաց հոն,  
 փողացին մէջտեղ ինկած...

Միւս ձեզքէն վար կը թափին կարած  
 ժանեակի հատիկներ...

Փունջ մը մազ՝ կանտնչ ժապուէնտի  
 կապուած՝ ինկաւ ցիխերու մէջ :

—Է՛, մտածեցի, երբեմնի ջերմ սիրա-  
 հարներու ուխտի գրուականը թերեւս :

Հապա այն սեւ դուրպան... փողերը

երկար, շատ երկար... սայլին կողէն  
հախուած կը ձօճի՝ որպէս մահապարտ...

Սայլը դուրս կուգայ քաղքէն, կը կե-  
նայ զատիվայրի մը առջև, ուր կը սպա-  
սեն նման ուրիշ սայլեր:

Ամէնքն ալ կը պարպեն իրենց բնօր  
ու ետ կը դառնան նորերը ժողովուրդ...:

Լուսցեր է արդէն: Եւ ետ հող, այդ  
ազրակոյտին առջև աւելի պարզ տեսայ  
մարդկային ամբողջ կեանքը, անոր հողին  
փոթորիտը խեղճուկ կիրքերը, երեւակա-  
յութիւնը սնուցանող ունայնամիտ իղձերն  
ու ակնկալութիւնները... միլիոնաւորնե-  
րու հրճուանք, գոհունակութիւն պատճա-  
ռող այդ անարժէք արժէքները մէկ մէկ  
կենդանի պատմութիւններ ունէին...

Սայլերը իրարու ետևէ լեցուն պիտի  
գան ու երթան դատարկ...

Ծայրեց արեւը և լզեց իր առաջին  
չողերով այդ ինկած փառքերուն երեսը...:

Եւ աղբին այդ թարմ կոյտը արեւի  
առաջին չողերուն տակ՝ ամչնայով կար-  
ծես, մարդկային իղձերու ողորմելիութիւ-  
նը կ'ողբար...

(1911)

## II

Ներսը տօթ է:

— Երթանք, — թեւէս կը բռնէ ընկերս:

— Ուր:

— Գուրս:

Եւ գլուխնիս կախած՝ լուս կը քա-  
լենք Բերայի շիտակը:

Մեր շուրջը կ'եռայ հասարակութիւ-  
նը: Հեւ ի հեւ, շնչասպառ կը վազեն  
քրտնաթոր, զիրար կոխտուելով:

— Գոյութեան կռիւ... մայրաքաղա-  
քին սալայատակներուն վրայ. միլիոնաւոր  
ժողովուրդ մէկին դէմ, մէկը միլիոնին  
դէմ, պայքարը անխնայ է, յաղթողը ա-  
նողորմ ու ամբարտաւան, պարտուողը երկ-  
չոտ ու ստրուկ, պատրաստ՝ երկրորդ ան-  
կուսին.

«Ապրէ՛ որքան կրնաս».

Անա՛ առեղծուածը:

Իսկ որքան կրնամ...

Ինչպէս արդեօք հաշտեցնել հողիի

աստուածային թռիչները այնքան անդթօրէն պահանջկոտ ստամոքսին հետ :

Երկինքէն զրկուած աստուածներն անգամ ի դուր փորձեցին դանկ հաշտութեան եզր մը ներհակ բեւեռներուն մէջ . նուազեցում, նուազեցում մէկի յօգուտ միւսին, նուազեցում մինչև ոչնչութիւն . . .

— Հրդեհէ՛ն. — առջևն իս կը կարէ զեւաստի կին մը պատասած հագուստին մէջ , բայց բաւական գրաւիչ : — Հրդեհէ՛ն , — ձեռքը կ'երկարէ , ձայնը կերերայ խեղճին , ու դարձեալ հայեացքը երկչոտ մեզ կը դարձնէ :

Կնոջ թեւերէն կախուած շուքրիկ աղջընակին մանկունակ հայեացքը դեռ եւս խնդիրքի , ազաչանքի արտայայտութիւն չունի , զարմացկոտ ու հետաքրքիր աչքերը անցորդը կը դիտեն , սպասելով թէ ինչ պիտի դնեն իր մօր զողողօնն ափին մէջ . . .

Անցորդներու վաւաչոտ ակնարկներէն

կը կարգամ միտքերը :

Բերայի Շխտակ , կայ նիւթ մը արդեօք , իր մը , նայն խակ սրբութիւն , որ չըլլայ սուտրկայ ստոր վաճառքի . . .

Այնպէ՛ս կ'ուզեմ բոց ծովը կլկլ . . .

— Երթա՛նք :

Եւ Մեծ Կզզին մեկնող նաւը կը լեցուի տակաւ , երջսեռ հասարակութիւնը ակնունկներուն վրայ իրարու քով կը սեղմուի :

Նիհար մանուկ մը մէկ թեւը կարած՝ կը ծռի տախտակին վրայ և ուրախ ճամբորդներուն կօշիկները կը սրբէ շարքով :

Ոմանք ակնունկու տակ կը թաքցնեն սաքերնին , անշուշտ . . . յօգնութիւն չը պատճառելու աղեկին , խակ ան՝ կամակտրութեամբ մէկ ձեռքը կ'երկարէ , ակտիւ տակէն դուրս կը հանէ որ վաշին մաքրէ , բայց ոտքի ակրոջ խոպոտ ձայնն ու զայրացկոտ ակնարկը կուզան սանձելու յամառ պատանին . . .

Մովուն բացերը...

Նաւին երկու կողերէն հսկայ անիւ-  
ները կը թաւալին շառաչալի, ու ճերմակ  
փրփուրներով եռուն ճամբայ մը կը թո-  
ղունք մեր ետին...

Օ՛խ... որքա՞ն լաւ է երբ կ'երթաս,  
երբ կը շարժիս, իւրաքանչիւր ակնթար-  
թին նախորդէն ասորեր վայր մը, միշտ  
յառաջ...

Բայց ո՞րն է ետ և ո՞րն է առաջ. սոսկ  
պայմանադրական ընդունելութիւն մը չէ  
այս բոլորը, շարժումի գործողութիւնը  
ինքն իրեն համար արժէք չէ՞ արդեօք:

Ըսին և կ'ըսեն, երկիրը կը դառնայ  
մեծ ոլորտներով, ամբողջ տիեզերքը իր  
անհունութեան եզրերուն մէջ իսկ, որուն  
սահմանները դեռ ոչ մի գլուխ չէ կրցեր  
չափել երեւակայութեան հզօր ճիգերով,  
չարժում չէ՞ միայն...

Ի՞նչն է նպատակը...

Միայն այն գիտեմ, որ երբ կեցեր եմ,  
ոգիս մտայ, ճանձրոյթը կապարեայ ծան-

րոցներով սիրտս կը ճմլէ, կեանքին ար-  
ժէքը ոչնչութեան մէջ միշտ թաւալգլոր  
ինքն ալ անոր մաս կը կազմէ շուտով:

Ուղղութիւն, լոկ բառ չէ՞ արդօք, ետ  
կամ առաջ, աջ կամ աճեակ, շարժման  
ընթացքը իր համար նպատակի կէտ չի  
կրնան ըլլայ...:

Չափահաս կին մը, կարմիր այտերով,  
կը ժպտի անդադար չորս կողմ նայելով:

Կնկան յառուկ հաստութեամբ մը կը  
զգայ, որ իր մասին կը խօսինք: Գլուխը  
պատացուց, ապա մեզ դարձաւ, քողին տա-  
կէն շրթունքը օճեց լեզուին ծայրով, աչ-  
քերուն չաւրջը կնճիտներ կազմեց, ինչպէս  
կատու մը, կրբ որ կը շոյես:

Արեւի վերջին ճառագայթներուն տակ  
կը վառի չրջապատը: Ի՞նչ վրձին պէտք է  
ներկերու խառնուրդն արագ կողմնու-  
երկինքին գոյները, ամպերուն եզրերը ու  
ծովին ալիքները... որքա՞ն արագ կը  
փոխուին...

Գեղեցիկ Պոլիս. թովիչ ու դալուկ.

քնքուշ բնութիւնը փոքր է վրան ծուլութեան յբանջը և բարէս ոսկեղօծ դիցուհի մը չքնաղ՝ խունկի ու մոմի մութով ու յոյսով ամբողջ ողողուն՝ կը ծիայ հանդարտ:

Հերբ՝ ճակ գլխի ոսկի մազերը կը լուռայ Սև Մովի աւազանին մէջ:

Ու սրբանոցը, չքեղ դմբութեան մանկակով դարդարուն, կը ցօղէ Վոսխորի ջինջ կոհակներով:

Աջ թեւը պարզած Նիկոմիդիոյ ծովախորչին մէջ ամբողջ Ասիան ուսին է դրեր: Զախ թեւը ոսկի ապարանջանով՝ Ոսկեղջիւրի մէջ ամբողջ Եւրոպան անութն է գարկեր:

Կուրծքը հոլանի՝ Մարմարայի բացեալ քիւ փոքր է արծակ արեւին առջեւ:

Իսկ սրունքները չզարչով պատած՝ հասեր են Միջերկրականի մեծ ալիքներուն, ուր հին Յունաստանի ափերը կը շոյեն:

Նաւը կը թռի կարծես:

— Ով կին դու զհունկ, ինչ է քու

խորհուրդը. ինչ հսկայ ուժ է մէջդ ամբարուած, որ դարեր շարունակ դէպ քեզ կը քաշես բազմազան ազգեր, տաք բազրակներով կուրծքիդ կը սեղմես. դիցուհի մը վայել ջերմ համրոյրներով ճակատը կը վառես շատ տիրոջներու... որ յետոյ... մէկ կողմը նետես...

Պարսիկ արքայի գոռ հարուածները կոնակիդ իջած իր խանդառութեան արդիւնքը չէ՞ր արդեօք:

Բիւզանդեան կայսրերը քու մերկ ծուցիդ մէջ առին իրենց վերջին շունչը:

Թուրք Սուլթանները անյայտէն ծնած՝ քու սաինքներուդ կաթնառատ պատկին վրայ հիմնեցին Ռաիֆի բազմակին հարէմը:

Եւ այսօր արդէն դուն չես պատկանիք միմիայն մէկին.

Դո՛ւն, համաշխարհային հարէ՛ մդ չքնաղ.

Սիրատենչ սիրտս զինովցած քեզմով, բոպէական վայելքի տենչով բորբոքած՝ երիտասարդի մը յատուկ խենթ արցունք-

ներով եւ ա՛լ լուացի քու մարմար կուճքդ  
և համբոյրներով մարմննդ ծածկեցի .

Բայց այժմ՝ մեղկութեան այդ անուշ  
թոյնը հեռու է կը վանեմ, կը ջարդեմ բա-  
ժակը խաղաղ գիշերային աստղային լոյ-  
սերէն շինած՝ դայրոյթի կնճիւր ճակտիս  
հաւաքած՝ մեծ տակաւնէն հսկայ թու-  
քով մը կը ձեւեմ ճակատդ .

— Դո՛ւն, միջնաշխարհիկ հսկայ Պողա-  
նոց . . . :

(1911)



## ԵՍ ՔԵՉ ՅԻՇԵՅԻ...



Անցեալ օր, մի՛աքդ է, կուրծքիդ  
փունջէն վարդ մը քաղեցի, քնքուշ ու  
կարմիր կոկոն մը աղւոր . . .

Սեղանին վրայ, ծաղկամանիս մէջ  
տեղաւորեցի . ջուր ա՛լ լեցուցի անօր ու-  
տին տակ . սրտուհանին փեղկերը ամուր  
դոցեցի ,

Որ քամինքուռ ուժգին հոտանքէն հե-  
ռու , ապահով մնար այդ կոկոն , որ հան-  
դիսափ մէջ ծաղկէր այդ կոկոն . . .

Գիշերը յանկարծ՝ երբ հուր կանչեց .  
Վեր թռայ տեղէս , լոյսը վառեցի ,  
սուաջին ակնարկս սեղանիս վրայ , ծաղ-  
կամանիս մէջ վարդիդ նետեցի . . .

Կոկոնը բացուած էր . թերթերը քըն-  
քուշ գիրկընդխառնումէն արձակուեք էին .  
և մէկը անոնցմէ սիրուն եզրերը ջուրին  
էր հակեր . . .

Հաւը կրկին կանչեց,  
... Թերթիկը շրթաւ, ջուրին մէջ  
ինկաւ...

— Ես քեզ յիշեցի...

Սիրտս արիննեցաւ...

Վարդն սաւի, չրթունքիս դրի ու համ-  
բուրեցի:

Բայց վարդի փոխան՝ մերկ ցօղուն  
միայն մնաց ստիւս մէջ.

Թերթիկներ բարձր բաց լանջիս վրայ  
Թափթփեր էին ու այնտեղ փակած կը  
քնանային.

— Ես քեզ յիշեցի...

Սիրտս արիննեցաւ...

Թերթիկը թափեցան վարդիդ կոկոնին,  
հազիւ հաճոյք մը առած չրթունքէս.

Ծաղիկդ չքնաղ պիտ թօշնի իսպառ,  
դեռ շունչ մը չառած՝ անմահ հողիէս.

— Ես քեզ յիշեցի...

(1912)



## ՈՂՋՈՅՆ ՔԵՉ ԴՈՒ ԿԻՐՔ...

Է՛յ դուք ալիքներ հսկայ ու դաժան,  
Սպիտակափառ փրփուր նսկասնիդ՝  
Այդպէս շարունակ հուժկու, վիթխարի,  
Գնում եք, գալիս ու նորից գնում,  
Ժայռերին դարձում, ինքներդ փշուրում,  
Փրփուրներ ժայթում ահռելի կոճից,  
Կասաղի բաւր փրփուր բօբուելով՝  
Միշտ մռնչում եք որոտի ձայնով.  
Անսամանութեան ծայրերից եկած՝  
Անհուն մեծութեան դուք փառք պատմող-  
ներ,

Ասացե՛ք ինձի,

— Դուք ի՞նչ եք ուզում:

Անծայր ովկիանի ջրերից կազմած  
Լեռ ալիքներ խո՛խս ու դաժան,  
Ես ձե՛զ եմ անում.

— Դուք ի՞նչ եք ուզում:

Բայց իմ հարցերին չկայ պատասխան.

Լեռ ալիքները փոքրկից մղուած  
 Յաւիտեանական մեծ կեանքն են ապրում...  
 Եւ որոտընդոտս շաչ ու շառաչում,  
 Հսկայ ջրերի զանգուածը կապոյտ  
 ձերմակ փրփուրի ալիքներ կազմած՝  
 Վեհ, ասուածային կրֆով են ապրում...  
 Չը կայ նպասակ, միայն հսկայ կիրք,  
 Փոքորիկն անեղ ջրի մեջ մսած՝  
 Փրփուր է ժայթքում ամպերից վերել,  
 Երկինք ու գետին իրար խառնուած՝  
 Ողջ բնութիւնը կրֆով բռնկած՝  
 Կասաղութիւնն է միմիայն քափում...  
 — Ողջո՛յն քեզ, դու կիրք, բնութեան սաս-  
 ոււած:

Կիրքն է ուժ Տալիս խաղաղ ջրերին,  
 Ուժ ու զօրութիւն լեռներ կազմելու,  
 ձերմակ շիբերով երկինք ցայտելու.  
 Կիրքն է ուժ Տալիս հսկայ փոքորկին  
 Անեզրութեան մեջ մրրիկ դառնալու,  
 Կիրքն է ուժ Տալիս ամբողջ բնութեան  
 Սեղծագործող կեանքը ապրելու...  
 — Ողջո՛յն քեզ, դու կիրք, բնութեան սաս-  
 ոււած:

Չը կայ նպասակ, փոքրերին յատուկ:  
 Հսկայ ջրերի փոքորկից ուժգին,  
 Շաչող, շառաչող ալիքից զօրեղ,  
 Իմ կրծքի սակն էլ թող կիրքը եռայ,  
 Եռայ, փրփրի, փրփուրներ ժայթքի,  
 ձերմակ փրփուրից կասաղի շիբեր,  
 Կրքի շիբերից ամեն կողմ ցայտի,  
 Յայտի, բարձրանայ, երկինքը թռչի,  
 Կրքի ասուածոյ հետք համբուրուի:

(1909)



## Ծ Ո Վ Ը

ԾճՎ,

Ես քեզ գիտեցի, երբ գոթորիկը ծուցիդ մէջ մտած՝ հսկայ զանգուածդ վեր վար կը խառնէր:

Ես քեզ գիտեցի, երբ վերջապահի դատ վաս դռներով շքեզ պծնուած հարսի մը նման քնքուշ նազանքով խաւարին գիրկը իյնայ կըղձայիր:

Ես քեզ գիտեցի, երբ արշալուսին ծուէն ամպերու քույաներու մէջ հեղիկ պիւքներդ խելօքիկ, հանդարտ՝ ափերին քնքուշ համրոյններ կուտար:

Ես քեզ գիտեցի, երբ միջօրէի տապ արևին տակ շողիդ թափանցիկ կապոյտ-ափզ մէջէն երկինք կամբասնար:

Ես քեզ գիտեցի, երբ շողեկաթսան լանջքդ կը պատուէր հասու սուրի մը պէս:

Նկարներ

և բացուած լանջքդ նորէն կը լեցուէր ձերմակ արիւնով, կեռար քիչ մ'ատեն, որ նորէն հանգիստ իր գոյնը առնէր:

Ես քեզ գիտեցի, երբ ատաղերուն բոյլը ծոցիդ մէջ առած՝ կէս դիչերային խաւարի գիրկին անուշ օրօրով կը քնանայիր: Յեռոյ՝ ետ դարձայ:

Հողիս գիտեցի,


Եւ այդ ամէնը, ա՛խ այդ ամէնը երբ որ հոն տեսայ:

ԾճՎ,

Բոպէ մը քեզ՝ հողիս կարծեցի:

(1912)





ՆՈՅՆ ՀԵՂԻՆՈՒԿՆ

Գրք.

1. Մարդիկ արածում են . . . . .
2. Մարք . . . . . 4

ԽՐԱՄՈՒՂԻ ՏՈՒ Լ

**ՆԿԱՐՆԵՐ**

Բ. ԳԻՐԿԸ

**ԳԻՆԸ 100 ՓՐՑ.**

Դիմել՝ Կիրասուն «ՓԵԹԱԿ» Տպարան ևս  
Կ. Պոլիս «ԱՐՇԻՒ» Դրամամատակց



ՀՀ Ազգային գրադարան



NL0343956

43285